Übersetze: Մի ծեր (Greis) կար — Ձի կայ: կայ (ja) — Ձեր սենեակում շատ (viele) սեղաններ (Tisch) կան — Մեր սենեակում երկու (2) սեղան կայ — Այս քաղաքում տասը (10) բժիշկ կայ — Դուք շներ ունի՞ք — Ոչ, շներ չունիմ — Ձը գիտէ՞ք, մեզանից ով առաջ անցավ (überholte) — Ես ինքս (selbst) էլ գիտեմ — Իսկ ես չը գիտէի, որ դուք գրում էք (գրել [schreiben] լրագրներում (լրագիր Zeitung) — Ես ունիմ մեծ եղբայր — Դու չունիս մեծ եղբայր — Դու չունիս լաւ գրիչ — Ի՞նչ կայ (was ist los; was gibts?) — Ոչինչ չ'կայ — Wissen Sie, wer dieser Mann ist? Ich weiß (es) nicht. Ist Wein zu haben? Ja (այո), es gibt sowohl (էլ nachzustellen!) weißen (ճերմակ), als (էլ) roten (կարմիր) — Hast du Geld? Nein, ich habe keines (übers. ich habe nicht) — Weißt du, wo unser Arzt wohnt? Nein, ich weiß (es) nicht.

II. գալ kommen, տալ geben u. լալ weinen haben außer andern eine gemeinsame Unregelmäßigkeit, nämlich die Endung իս statt ում im Präs. u. Imperf. Nehmen wir sie einzeln durch.

a) գալ kommen (Themata գալ u. եկայ) Präs. գալիս եմ, ես, է սյւ. Imperf. գալիս էի սյւ. Fut. կը գամ, կը գաս, կը գայ, գանք, գաք, գան Ռոնդ. կը գայի, գայիր, գար, գայինք սյւ. Ռոնյ. Präs. գամ, գաս սյւ. Perf. գայի, գայիր սյւ. Imperat. ե՛կ, եկէ՛ք Vern. մի՛ գալ (գար), մի՛ գաք Perf.

Ինձ. եկայ, եկար, եկաւ, եկանք սիւ. Part. Բրօ՛յ. եկող Բեր՛.  
եկած (եկել) Fut. գալու.

b) տալ geben (Themata տալ, տուի) Բրօ՛յ. տալիս եմ  
սիւ. Imperf. տալիս էի սիւ. Բեր՛. տուի, տուիր, տուեց,  
տուինք, տուիք, տուին Fut. կը տամ, տաս, տայ, տանք,  
տաք, տան Քոնձ. կը տայի, տայիր, տար, տայինք, տայիք,  
տային. Քոնյ. Բրօ՛յ. տամ, տաս. Բեր՛. տայի, տայիր. Imperat.  
տուր, տուէք. Երն. մի տալ (տար), մի տաք. Part. Բրօ՛յ.  
տուող. Բեր՛. տուած (տուել). Fut. տալու. Pass. տուել.

c) լալ weinen (Themata լալ, լացի) Բրօ՛յ. լալիս եմ.  
Imp. լալիս էի. Բեր՛. լացի, լացիր, լացեց, լացինք սիւ.  
Fut. կը լամ, լաս, լայ, լանք սիւ. Քոնձ. լայի, լայիր,  
լար, լայինք սիւ. Քոնյ. Բրօ՛յ. լամ. Բեր՛. լայի. Imperat.  
լացիր, լացէք. Երն. մի լալ (լար). Part. Բրօ՛յ. լացող.  
Բեր՛. լացած (լացել). Fut. լալու.

Übersetze: Հաց մի տաք շանը. — Հայրիկ, տուր  
ինձ փող (Geld) — Այդ գնացքը (Zug) գալիս է գիշերուայ  
ժամը երկուսին (um zwei Uhr nachts) — Ո՞վ եկաւ — Երբ  
եկաք զուր Բաթումից (aus Batum) — Մենք եկանք երեկ  
(gestern) գիշերուայ ժամը չորսին (vier Uhr) — Ինչո՞ւ  
(warum) երեխաներ լալիս են — Մի լար, աղջիկ (Mädchen)  
— Կոնդուկտորն (Kondukteur) եկաւ — Հաց տուր մեզ — Տոյց  
տուր (ցոյց տալ zeigen) ինձ մեր դասը — Տուէք մեզ ձեր  
գիրքերը — Նա ի՞նչ տալիս է քեզ — Gib mir Wasser!  
Woher kommst du? — Ի՞նչ արեմ շուրջ Գիշերը Գիշերը  
gehen — Ի՞նչ արեմ ձեր Բրիւի ցոյցը — Gebt diesem  
armen Manne Brot.

III. Die übrigen unregelmäßigen Verben sind: (Nur die v. d.  
regelm. Konj. abweichenden Formen sind aufgeführt).

- 1) *անել* tun, machen (Themata: *ան-ել*, *ար-ի*): Perf. *արի* (*արեցի*), *արիր*, *արեց*, *արինք*, *արեք*, *արին*. Imper. *արա՛*, *արէ՛ք*. Partiz. *անող*. Perf. *արած*, *արել*.
- 2) *առնել* nehmen (Themata: *առն-ել*, *առ-այ*): Perf. *առայ*, *առար*, *առաւ*, *առանք*, *առաք*, *առան*. Imper. *առ*, *առէ՛ք*. Part. *առնող*. Perf. *առել*, *առած*.
- 3) *ասել* jagen Perf. *ասի*, *ասիր*, *ասաց*, *ասինք*, *ասիք*, *ասին*. Imper. *ասա՛*, *ասէ՛ք*. Part. *ասող*, *ասել*, *ասած*. (Auch *ասեցի*, *ասեցիր* usw. Vergl. Vett. XVI.)
- 4) *բերել* bringen Perf. *բերի* (*բերեցի*), *բերիր*, *բերեց*, *բերինք* usw. Imper. *բե՛ր*, *բերէ՛ք*. Part. *բերող*. Perf. *բերել*, *բերած*. (S. auch V. XVI.)
- 5) *դնել* setzen, stellen, legen (Them.: *դն-ել*, *դր-ի*). Perf. *դրի*, *դրիր*, *դրեց*, *դրինք*, *դրիք*, *դրին*. Imperat. *դե՛ր*, *դրէ՛ք* Vern. *մի՛ դնել* (*դներ*), *մի՛ դնէք*. Part. *դնող*, *դրել*, *դրած*.
- 6) *ուտել* essen (Them. *ուտ-ել*, *կեր-այ*). Perf. *կերայ*, *կերար*, *կերաւ*, *կերանք*, *կերաք*, *կերան*. Imp. *կե՛ր*, *կերէ՛ք* Vern. *մի՛ ուտել* (*ուտեր*). Part. *ուտող*, *կերել*, *կերած*.
- 7) *տանել* tragen, ertragen (Them. *տան-ել*, *տար-այ*. Perf. *տարայ*, *տարար*, *տարաւ*, *տարանք*, *տարաք*, *տարան*. Imper. *տա՛ր*, *տարէ՛ք*. Part. *տանող*, *տարել*, *տարած*:
- 8) *թողնել* lassen, zulassen, erlauben (Them. *թող-նել*, *թող-ի* Perf. *թողի*, *թողիր*, *թողեց*, *թողեցի*, *թողեցիր* usw. (auch *թողեցի*, *թողեցիր* usw.) Imp. *թո՛ղ*, *թողէ՛ք*. Part. Perf. *թողած*, *թողել*. (S. auch Vett. XVI.)

- 9) բանալ aufdecken, öffnen<sup>1)</sup> (Them. բան-ալ, բաց-ի)  
 Perf. բացի, բացիր, բացեց, բացինք usw. Imperat.  
 բաց, բացէ՛ք. Part. բացող.
- 10) դառնալ zurückkehren<sup>2)</sup> (Them. դառն-ալ, դարձ-այ)  
 Perf. դարձայ, դարձար, դարձաւ, դարձանք usw.  
 Imper. դարձի՛ր, դարձէ՛ք. Part. դարձած (դարձել).  
 Ebenso geht:
- 11) բառնալ laden, beladen (Them. բառ-նալ, բար-ձի).

C. Übersetze: Նա մեզ գիրք է բերում. — Ես սեղանի վրայ (auf) դրի մի հացի կտոր (Stück). ուր է նա. — Ես կը բանամ լուսամուտը (Fenster) — բացէ՛ք — Ասացէ՛ք, որ սամավարը (Samovar) բերեն — Ասա՛ (ergänze: es) քո մեծ եղբորը — Ասացէ՛ք ձեր հօրը — Գնա սիւնոցը (Tischstuch) բեր — Գնա պանիր և իւղը բեր — Դուռը բաց — Շիջը (Flasche) տար — Ես հաց կերայ — Ահա (hier ist) հաց և պանիր, կե՛ր — Was hat er gesagt? — Was gibt er dir? — Stelle die Lampe (ճրագ) auf den Stuhl — Was hast du gegessen? — Laß mich lesen (Laß, daß ich lese)! — Öffne den Koffer (սնդուկ)! — Er kam gestern zurück — Trag diese Sachen weg! — Was hast du gekauft? — Komm schnell zurück! — Er brachte mir ein Buch — Warum hast du die Türe geöffnet? — Nimm dieses Geld!

### Unpersönliche Verben.

Außer den Wettererscheinungen bezeichnenden wie որոտալ donnern, անձրևել regnen, ձիւնել schneien, փայլատակել blitzen, կարկառել hageln usw. gehören hierher noch Wendungen wie պէտք է es ist nötig, man muß, հարկ է es ziemt, gehört sich, երևում է es scheint, մնում է es bleibt, հարկաւոր է es ist nötig, man braucht.

<sup>1)</sup> Գնացող բաց անել.

<sup>2)</sup> Այս վերադառնալ.



(Fortis.) Հայկի յաջորդները հետզհետէ սկսեցին աճող ժողովուրդի պիտոյքները լրացնել, ընդարձակելով իրենց երկիրը դէպի հիւսիս: Ճանաչելով մէկ ընդհանուր նահապետի գերիշխանութիւնը ամեն ցեղ իր ցեղապետի անմիջական իշխանութեան տակ էր գտնուում. հետզհետէ տարածուելով հայերը սկսեցին հարեան ազգերի ու ժողովուրդների հետ շփուել և ընդհարուել, հարեան ցեղերը արևելքից Մարացիք, հարաւից Ասորեստանցիք և արևմուտքից Կապադովկացիք, սկսեցին Հայկի երկիրը ոտնակոխ անել: Հարկաւոր էր մի անձ, որ ժողովէր երկրի ներքին զօրութիւններն և հարեանների ասպատակութիւնների առաջն առնէր: Այս բախտը վիճակուեց Արամ նահապետին:

Արամի առաջին գործն եղաւ Հայաստանի այլ և այլ ցեղապետներին հաւաքել իր դրօշակի և իշխանութեան տակ: Այս ցեղապետների օգնութիւնով Հայաստանի զանազան կողմերից ժողովեց յիսուն հազար քաջ երիտասարդներ, որոնք մինչև այն ժամանակ իրենց նետ ու աղեղը միայն որսորդութեան մէջ էին գործ դրել:

### Freie Uebersetzung.

Haits Nachfolger fingen nach und nach (հետզհետէ) an, die Bedürfnisse der wachsenden (աճել) Bevölkerung zu befriedigen, indem sie erweiterten (ընդարձակել) ihr Land nach Norden. In dem sie<sup>1)</sup> anerkannten (ճանաչել) die Suprematie (գերիշխանութիւն) eines gemeinsamen Stammvaters (նահապետ) befand sich jedes Geschlecht (ցեղ) unter der unmittelbaren (անմիջական) Herrschaft seines Geschlechtsvaters. Indem die Armenier sich allmählich ausdehnten (տարածուել) kamen sie in Berührung

<sup>1)</sup> Nämlich: alle Geschlechter.

(շփուեւել) und stießen zusammen (ընդհարուեւել) mit benachbarten (հարեաւն) Völkern und Nationen. Nachbarstämme, im Osten (արեւելք) die Medier<sup>1)</sup>, im Süden (հարաւ) die Assyrer und im Westen (արեւմուտք) die Kappadokier, fingen an das Land der Armenier zu zerstören<sup>2)</sup>. Es war eine Persönlichkeit (անձ) nötig (Տ. Զ. XIX. Աս. Երբ.) um die innern (ներքին) Kräfte des Landes zu sammeln (խողովել) und den Einfällen (ասպատակութիւն) der Nachbarn vorzubeugen (առաջն առնել). Dieses Glück fiel dem Stammesansführer Aram zu (վեճակուեւել zu Teil w.).

Arams erste Tat war, daß er die verschiedenen (այլևայլ<sup>3)</sup> Stammeshäupter versammelte unter seine Fahne (դրօշակ) und Macht (Anführerschaft). Mit Hilfe dieser Stammeshäupter sammelte er aus den verschiedenen Bezirken (eigtl. Seiten կողմ) Armeniens 50000 tapferer (բազ) Jünglinge<sup>4)</sup>, die bis dahin (wörtl. bis zu dieser Zeit) ihre Bogen (նետ) und Pfeile (աղեղ) nur zur Jagd (wörtl. in d. Յ.) gebraucht (գործ դնել) hatten.

#### Grammatikalisches. Deklinierbare Verbalformen.

Der Infinitiv, das Partizip Präsens und das Part. Pers. auf ած können dekliniert werden und die Partikeln *ս, ն, ը, դ* annehmen. Die Sprache faßt sie eben in solchen Fällen als Substantiva auf: z. B. բնել schlafen, բնելու համար um zu schlafen, բնելու ժամանակ zur Schlafenszeit, բնելուց յետոյ nach dem Schlafen. զբօսնելը das spazieren gehen, իրազրուելը aus dem spazieren gehen, ծխելու um zu rauchen, Part. ծխող der Rauchende, der Raucher, չծխող der Nichtraucher, գնացող der Gehende, Reisende, մեռած der Gestorbene, Tode, իմ ասացս mein Gesagtes, das was ich gesagt habe.

Übersetze: Գարնան (գարու Frühling) անտառի (Wald) մէջ զբօսնելը շատ ակորժելի է — նրանք գնում են

<sup>1)</sup> Auch մար. (Auch Kurden).

<sup>2)</sup> wörtl. zertreten (ոտնակոխ) machen.

<sup>3)</sup> auch zusammengeschrieben.

<sup>4)</sup> Gewöhnl. folgt auf Zahlwörter das Singular; bei lebenden Wesen kann jedoch auch der Plural stehen.



գիւղ (aufs Land) զբօսնելու համար — Գրելու ժամանակ չ'պէտք է (s. vor. Lekt. unperf. Verb.) խօսել — Ինչ օգուտ (Nuzen) հիւանդին (hier: für e. Kranken) զբօսնելուց — Ուտելու ժամանակ չ'պէտք է խօսել — Շատ գինի խմելը վնասակար (gefährlich) է — Նրա գնալուն (սն. = über s. Յ.) ես ուրախ (froh) եմ — Ես կը պարկեմ (w. mich legen) քնելու — Ես դուրս (hinaus) կը գամ ծխելու — Ուրա աղաղակելով (Mit Hurra=Rufen) — Այսօր վագօններում շատ գնացողներ կան — Մերածին դրին ծառի տակ (unter) — Այս բաժանմունքը (Abteil) չծխողների համար է — Գնացէք ճաշելու — Գնանք թէյ խմելու — Իմ ունեցած գրքերս ունիք — Ձեր ունեցածներն ունիմ — Գիրք գնելու ցանկութիւն (Zust) ունի՞ք — Աշխատելու ժամանակ ունի — Աժս իրիկուն պարահանդէսին (Ball) գնալու միտք (Absicht, gedenken zu) ունիմ :

XXI.

Սրանից յետոյ Արամը իր զօրքով գնաց հարաւային կողմերը, ուր Բարշամ անունով ասորի իշխանը բռնանալով՝ շատ էր նեղացնում հայերին: Արամը ետևից ընկնելով՝ զօրքը ցրուեց և մինչև Ասորեստանի լեռները փակցրեց, ուր Բարշամը Արամի զինակիրներին պատահ հելով սպանուեց նրանցից: Արամը նրա երկի ընթերի մեծ մասի վրայ էլ հարկ դրեց:

Երբ այսպէս արևելեան և հարաւային կողմերից իր հայրենիքը ապահովեց Արամը իր ուշքը դարձրեց արևմտեան սահմանների վրայ և մի միտք յղացաւ — Հայաստանի սահմանները այս կողմից ընդարձակել, որով հայ ժողովուրդը երկու մեծ ծովերի պիտի մօտենար, Պոնտոսին (Սև ծով) և Միջերկրականին: Այս ծովերի մէջ եղած

տարածութիւնը, որ յետոյ Փոքր Ասիա կոչուեց բռնուած էր զանազան ցեղերով, որոնց մէջ նշանաւոր էին Գապաղովկացիք, Պայապիս անունով զօրաւոր իշխանի առաջնորդութեան տակ: Պայապիսն Արամի դիտաւորութիւնը գուշակելով մեծ պատրաստութիւնով մտեցաւ հայոց սահմաններին: Արամը քառասուն հազար հետեակ և երկու հազար ձիաւոր զօրքով յարձակուեց նրա վրայ, յաղթեց նրան ու Միջերկրական ծովի կղզիներեց մէկը փակցրեց:

#### Uebersetzung.

Hierauf ging Aram mit seinem Heer nach den südlichen (հարաւային) Gegenden, wo ein syrischer (ասորի) Fürst mit Namen Barscham durch seine Tyrannei (բռնանալ) die Armenier sehr bedrängte (նեղացնել). Aram verfolgte (հետեց ընկնել) ihn, zerstückte (ցրուել) sein Heer und trieb es (փակցնել) bis in die Berge Syriens, wo Barscham die Waffenträger (զինակիր) Arams traf (պատահել) und von ihnen getötet wurde. Aram besteuerte (հարկ դնել<sup>1</sup>) einen großen Teil (մաս) ihrer Länder (երկիր).

Als er so die östlichen (արևելեան) und südlichen Striche seines Vaterlandes (հայրենիք) gesichert (ապահովել) hatte, wandte (դարձնել) Aram seine Aufmerksamkeit (ուշք) den westlichen (արևմտեան) Grenzen zu und faßte (յղանալ eigentl. schwanger s.) einen Gedanken (միտք) — die Grenzen Armeniens (auch) auf dieser Seite zu erweitern (ընդարձակել), womit sich das armenische Volk zwei großen Meeren nähern würde, dem Pontus (Պոնտոս) u. dem Mitteländischen Meere (Միջերկրական ծով). Die Strecke (տարածութիւն Ausdehnung) zwischen diesen Meeren, welche dann Kleinasien genannt wurde (կոչուել), war eingenommen (բռնել) von verschiedenen Stämmen (ցեղ), unter welchen die bemerkenswertesten (նշանաւոր) waren die Kappadocier

<sup>1</sup>) Հարկ Abgabe, Steuer.

unter der Leitung (*առաջնորդութիւն*) eines mächtigen Fürsten namens Pajapis. Pajapis, Aram's Absichten vorausahnend (*գուշակել*) näherte sich mit großen Vorbereitungen den armenischen Grenzen. Aram griff ihn mit 40000 Mann Fußvolk (*Հեռեակ*) und 2000 Reitern (*ձիաւոր*) an, besiegte ihn und verjagte ihn nach einer der Mittelmeerinseln<sup>1)</sup>.

**Grammatikalisches.** Mit Hilfe des Partizips Perfekt und des Zeitwortes *լինել* wird die sogen. umschreibende Konjugation des Verbums gebildet; das Passiv davon hat statt des aktiven Partizips das passive, also:

|             |  |
|-------------|--|
| Präs.       | <i>սիրած եմ լինում, ես լինում</i> usw.   |
|             | <i>սիրուած եմ լինում, ես լինում</i> usw.   |
| Imp.        | <i>սիրած (սիրուած) էի լինում</i> usw.  |
| Perf.       | <i>սիրած (սիրուած) եղայ</i> usw.   |
| Futur.      | <i>սիրած (սիրուած) կը լինեմ</i> usw.   |
| Konj. Präs. | <i>(որ) սիրած (սիրուած) լինեմ</i> usw.   |
| Imperat.    | <i>սիրած (սիրուած) եղիւր</i> usw.  |
| Negativ.    | <i>սիրած չեմ լինում — չէի լինում — չեղայ</i><br><i>— չեմ լինի — մի լինիր</i> usw. usw. |

Wiederholungsübung zur Lehre vom Zeitwort<sup>2)</sup>.

*Դուռը բաց արա — Պատուհանը խուփ արա* (schließen; auch: *խփել*) — *Պատուհանը փակէ* (schließen) — *Նստի՛ր* (s. setzen) *և զատդ գրէ* — *Նստի՛ր և բարձր կարդա* — *Վարժապետը սուսերէն լաւ է խօսում* — *Այսօր վարժապետը շատ վաղ եկաւ* — *Հայրը խմում է գինի, իսկ որդիքը խմում են թէյ* — *Գնա սիրոցը բեր* — *Վեր առ սիրոցը* — *Ինքնաւոր* (Samovar) *բեր* — *Տուր*

<sup>1)</sup> Das Ende dieses Lesestückes ist als Wiederholungslesestück weiter unten gegeben.

<sup>2)</sup> Der Schlüssel dazu am Ende des Schlüssels der aus dem Deutschen zu übersetzenden Sätze.

շինն և բաժակը — Պապը տուն է շինում — Աշակերտը  
 դասը չգիտէ — Հորաքոյրը որդի չունի — Ես հարցնում  
 եմ, դու պատասխանում ես — Դուք հարցնում էիք,  
 իսկ ես պատասխանում էի — Առաջ ես վատ էի գրում,  
 իսկ այժմ լաւ եմ գրում — Ես գնեցի երկու տետրակ  
 — Դու գնեցիր շորս մատիտ — Նա գնեց երեք գիրք —  
 Մենք ստացանք երկու նամակ — Հայրը հարցրեց որդուն —  
 Դու ծախեցիր երեք գիրք և շորս քանոն — Ձեր հայելին  
 (Spiegel) վայր ընկաւ (fallen) սեղանից — Իմ քոյրը վայր  
 ընկաւ ձիուց — Շուտով մենք կշինենք եկեղեցի (Kirche)  
 — Ես կխօսիմ վարժապետի հետ — Մենք կլինինք տանը  
 էգուց առաւօտեան — Ո՞ւր են քո ուսուերէն գրքերը :  
 Ո՞ւմ մօտ է կենում քո փոքր քոյրը — Ասացէք ձեր  
 սիրելի հօրը — Օգնէ քո խեղճ (աղքատ) հարևանին —  
 Օգնեցէք ձեր խեղճ ընկերին — Մայրը պարգևեց իւր  
 որդուն երկու գիրք — Իմ եղբայրն ստացաւ նամակ  
 իւր ընկերից — Էգուց իմ հայրը գնում է Տիֆլիս (Tiflis)  
 երկաթուղով — Այսօր ձեր հօրեղբայրն եկաւ Տիֆլիսից  
 երկաթուղով — Վարժապետը գնում է ուսումնարան մեր  
 փողոցով (durch unsere Straße) — Դու ե՞րբ կշինես նոր  
 տուն — Վեր առ իմ հին շորերը — Որոնեցէք իմ  
 ուսուերէն գիրքը — Դու կստանաս իմ հօրից լաւ պարգև  
 (Geschenk) — Ես ճանաչում եմ (գիտեմ) քո մեծ եղբորը  
 — Մենք այսօր կերթանք զբօնեւլու — Մենք  
 ծախեցինք մեր փայտէ տունը — Այսօր ես տեսայ  
 գեղեցիկ ձիաներ — Իմ հօրեղբայրը պարապում է  
 (treiben) գինեվաճառութիւնով (Weinhandel) — Ձեր հայրը  
 պարապում է (i. beſchäftigen) իւր գործով — Իմ եղբայրը  
 ապրում է իւր աշխատանքով (Arbeit) — Մեր հարևանի  
 ընտանիքը կերակրւում է (կերակրել nähren) կաթնէղէն  
 կերակրով (Nahrung) — Մեր եղբայրը համարւում է



(halten für) առաջին աշակերտ — Ես կորում եմ թուղթ սուր դանակով — Դու անուանում ես (անուանել nennen) աշակերտ, որովհետև սովորում ես — Հարկաւոր է լինիլ ջանասէր աշակերտ — Ձեր ուսումնարանումը շատ քիչ (wenig) աշակերտներ կան — Բարձր սարերի վերայ անտառներ չկան — Ես կորցրի (verlieren) իմ գիրքը — Ես կգամ կիրակի (= կհերակը Sonntag), եթէ առողջ կլինիմ — Գտա՞ր (finden) դու քո գիրքը — Այո, ես գտայ իմ գիրքը — Ես ցոյց տուի քո նամակը իմ հօրը — Եր՞բ է լինում ձմեռը — Ձմեռը լինում է զեկտեմբերին, յունուարին և փետրուարին — Ամառը լինում է յունիսին, յուլիսին և օգոստոսին — Դուք եր՞բ էք ծնուել (geboren w.) — Ես ծնուել եմ յունուարի ութին .

XXII.

Grammatikalisches: Präpositionen und Postpositionen.

Das Armenische verwendet sowohl Prä- als auch Postpositionen. Beispiele letzterer haben wir schon in den Vorübungen (11) angetroffen z. B. վարժապետի հետ mit dem Lehrer, սեղանի վրայ auf dem Tische; ein Beispiel ersterer ist դէպի սարը (bis) zum Berge. Die hauptsächlichsten Prä- und Postpositionen sind folgende:



- Präpositionen 1. mit Genitiv: մէջ in, inmitten, վրայ, վերայ auf, տակ unter, առջև vor, ետև hinter.  
 2. mit Genitiv oder Dativ: համար für, հետ mit, մօտ bei, nahe.  
 3. mit Ablativ: յետոյ nach.

Postpositionen mit Dativ: առանց ohne; mit Akkusativ: դէպի bis, zu, in d. Richtung zu, մինչև bis, bis zu.

Bemerkungen.

1. համար, հետ u. մօտ nehmen auch die Partikeln u, դ, բ (ն) an, z. B. հետս mit mir, մօտդ nahe bei dir, neben dir.

2. *ձեջ, ետև, տակ, առջև, վրայ* sind eigentlich Substantive und können als solche sowohl die eben erwähnten Partikeln annehmen, als auch dekliniert werden, z. B. *գետնի ձեջը* in der Erde, *տան ետևը* hinter d. Hause, *տան ետևից* von hinter dem Haus, *սեղանին տակի* unter dem Stuhl heraus, *կաշնու վրայից* von der Eiche herab.

Übersetze: *Ո՞ւր է ձեր շունը: Ես սենեակի ձեջ սեղանի տակն է — Մեր տունը գտնուում է (steht) գետի (Fluß) մոտ. Երբ ետևը բարձրանում է (erhebt sich) մի մեծ սար (Berg) — Հայրս գնում է քաղաք, գնա՛ նրա հետ: — Սովորաբար (gewöhnlich) արևը (Sonne) մայր է մտնում<sup>1)</sup> այն սարի ետևը — Քանի՞ (wie viel) վերստ (Werst) է մինչև ձեր գիւղը (Dorf) — Ես տխուր եմ (langweile mich) առանց քեզ: — Խոտի (Gras) վրայ, ծառի (Baum) տակ պառկում է (liegt) մի զինուոր — Ո՞ւմ հետ էք ապրում (leben): Ես ապրում եմ մի ընկերի (Kamerad) հետ — Զինուորները պատերազմում են (schlagen sich) Թագաւորի (König) ու հայրենիքի (Waterland) համար — Ո՞ւմ հետ էիք խօսում — Կամուրջ (Brücke) չկայ, մենք կ'անցնենք (überschreiten) ջրի (v. ջուր Wasser) միջով (durch das Wasser) — Ինձ համար — քեզ համար — մեզ համար — im Walde (mit Postposj. und dem betr. Kasus) — Vor dem Fenster (լուսամուտ) meines Zimmers — Im Zimmer — Auf dem Schrank (պահարան) — Mit meinen Brüdern — Der Schüler schreibt auf Papier — Der Vater kaufte einen Bleistift und eine Feder für die Schwester — Die Schwester geht zum Bruder, zur Mutter, zum Vater, zur Tante (Vaterschwester) — Petros (Պետրոս) kommt vom Vater, von der Mutter, vom Bruder — Die Schwester geht mit der Mutter — Der Bruder spricht mit der Schwester.*

<sup>1)</sup> *մայր մտնել (մտանել)* hineingehen (in die) Mutter = untergehen.

Bemerkung. Nach Verben der Bewegung steht auf die Frage wohin der einfache Akkusativ. *գնում է գիւղ* er geht ins Dorf; *նա գնաց Բաքու* er ging (fuhr) nach Baku; *գնում է քաղաք* er geht nach der Stadt, in die Stadt.

XXIII.

Grammatisches: Grundzahlen.

|                 |                             |
|-----------------|-----------------------------|
| 1 մէկ, մի       | 19 տասնութներ               |
| 2 երկու         | 20 քսան                     |
| 3 երեք          | 21 քսանումէկ                |
| 4 չորս          | 30 երեսուն                  |
| 5 հինգ          | 40 քառասուն                 |
| 6 վեց           | 50 յիսուն                   |
| 7 եօթը          | 60 վաթսուն                  |
| 8 ութը (ութ)    | 70 եօթանասուն               |
| 9 ինը (ինն)     | 80 ութսուն                  |
| 10 տասը         | 90 ինքսուն                  |
| 11 տասնումէկ    | 100 հարիւր                  |
| 12 տասներկու    | 200 երկու հարիւր            |
| 13 տասներեք     | 300 երեք հարիւր             |
| 14 տասն(ու)չորս | 1000 հազար                  |
| 15 տասն(ու)հինգ | 10000 տասը հազար,<br>(ըիւր) |
| 16 տասնուվեց    | 100000 հարիւր հազար         |
| 17 տասնուեօթը   | 1000000 միլիոն .            |
| 18 տասնութը     |                             |

Bemerkungen.

1. Die Reihenfolge in zusammengesetzten Zahlen ist die natürliche: 3527 = երեք հազար հինգ հարիւր քսանուեօթը.

2. Das Substantiv steht nach den Zahlwörtern meist in der Einzahl! (und dann natürlich auch das Verb) z. B. չորս մարդ 4 Männer, այս քաղաքում տասը բժիշկ կայ in dieser Stadt sind 10 Ärzte.

3. Vor dem Substantiv ist das Zahlwort unveränderlich z. B. *Հինգ մարդու* fünf Männer (Genitiv).

4. Meistehend nimmt es die bestimmenden Partikeln an u. wird dekliniert.

|        |               |       |                           |                  |
|--------|---------------|-------|---------------------------|------------------|
| Nom.   | <i>մի(ն)</i>  | Plur. | <i>միները</i> (die einen) | <i>երկու(ս)</i>  |
| Gen.   | <i>մինի</i>   |       | <i>միների</i>             | <i>երկուսի</i>   |
| Instr. | <i>մինով</i>  |       | <i>միներով</i>            | <i>երկուսով</i>  |
| Locat. | <i>մինում</i> |       | <i>միներում</i>           | <i>երկուսում</i> |
| Ablat. | <i>մինից</i>  |       | <i>միներից</i>            | <i>երկուսից</i>  |

|        |                          |                          |
|--------|--------------------------|--------------------------|
| Nom.   | <i>եօթը<sup>1)</sup></i> | <i>ութը<sup>1)</sup></i> |
| Gen.   | <i>եօթի</i>              | <i>ութի</i>              |
| Instr. | <i>եօթով</i>             | <i>ութով</i>             |
| Locat. | <i>եօթում</i>            | <i>ութում</i>            |
| Ablat. | <i>եօթից</i>             | <i>ութից</i>             |

|        |                |                 |                            |
|--------|----------------|-----------------|----------------------------|
| Nom.   | <i>չորս</i>    | <i>ինը</i>      | <i>տասը</i>                |
| Gen.   | <i>չորսի</i>   | <i>ըննի (!)</i> | <i>տասնի</i>               |
| Instr. | <i>չորսով</i>  | <i>ըննով</i>    | <i>տասնով</i>              |
| Locat. | <i>չորսում</i> | <i>ըննում</i>   | <i>տասնում</i>             |
| Ablat. | <i>չորսից</i>  | <i>ըննից</i>    | <i>տասնից<sup>2)</sup></i> |

5. In zusammengesetzten Zahlen wird nur die letzte dekliniert z. B. aus 1450: *Հազար չորս հարիւր յիսունից*.

Übersetze: *Հինգ մարդով — Ռուսները (Ռուս Ռուսի)*  
*տիրեցին* (bemächtigten sich) *Ղարսին (Kars) Հազար ութը*  
*հարիւր եօթանասուն եօթին նոյեմբերի (November) վեցին*  
*— Տարին (Յառ տարի) բա՛նի (wie viel) ամիս ունի —*

<sup>1)</sup> Verliert sein *ը* in den obl. Fällen.

<sup>2)</sup> Doch auch: *տասի, տասով, տասից* usw.



Տարին տասներկու ամիս ունի — Դու փող (Geld) ունի՞ս:  
 Ունի՞մ: Ո՞րքան (wie viel?): Ինչ ուուբլի տասներեք կողէկ  
 (Ropfen) — Այս ամիսը քանի՞ օր (Tag) ունի: Այս ամիսն  
 ունի երեսուն օր — Չորսհարիւր հազար մանէթ (= ոուբլի  
 Rubel) — Մեր քաղաքում երկու հարիւր հազար բնակիչ  
 (Einwohner) կայ — Ինչ յիսուն ոուբլի տուր — Գիշերուայ  
 ժամը տասներկուսին (gegen 12 Uhr) կը հասնենք (werden  
 wir ankommen).

Zur Bezeichnung des Alters bestehen eigene Ausdrücke u. zwar:  
 տարեկան = jährlich (v. տարի Jahr) u. ամսական monatig (v.  
 ամիս Monat) Յ. Յ. Հինգ տարեկան fünfjährig = 5 Jahre alt,  
 չորս ամսական 4 Monate alt. քանի տարեկան է նա Wie  
 alt ist er? երկու տարեկան և հինգ ամսական է Er ist zwei  
 Jahre u. 5 Monate alt.

Übung über „Zeit u. Uhr“.

|   |   |
|---|---|
| Ժամը քանիսն է                                 | Wie viel Uhr ist es?                              |
| Ժամը հինգն է, տասն է                          | Es ist 5 Uhr, 10 Uhr                              |
| Եօթից անցել է քսան րոպէ                       | Von 7 Uhr vergangen ist 20<br>Minuten (7 h. 20)   |
| Վեցին ուզում է տասը րոպէ                      | Von 6 Uhr fehlt 10 Minuten<br>(10 Min. vor 6 Uhr) |
| այդ գնացքը գալիս է<br>գիշերուայ ժամը երկուսին | Dieser Zug kommt nachts 2 Uhr<br>an.              |
| այժմ գրեթէ եօթ ժամն է                         | Es ist jetzt fast 7 Uhr                           |
| մէկին քառորդ է                                | Es ist $\frac{1}{4}$ auf 1 Uhr                    |
| չորսին կէսն է                                 | Es ist halb 4 Uhr.                                |

XXIV.

Ordnungszahlen. Werden aus den Grundzahlen mit Hilfe  
 des Suffixes երորդ gebildet, in zusammengesetzten Zahlen ist bloß  
 die letzte Ordnungszahl.

- |               |                      |
|---------------|----------------------|
| 1. առաջին (!) | 20. քսաներորդ        |
| 2. երկրորդ    | 21. քսան ու մէկերորդ |

- |                       |                         |
|-----------------------|-------------------------|
| 3. Երրորդ             | 30. Երես(ու)ներորդ      |
| 4. չորրորդ            | 40. քառաս(ու)ներորդ     |
| 5. հինգերորդ          | 50. յիսուներորդ         |
| 6. վեցերորդ           | 60. վաթսուներորդ        |
| 7. եօթներորդ          | 70. եօթանասուներորդ     |
| 8. ութերորդ           | 80. ութսուներորդ        |
| 9. իններորդ           | 90. ինըսուներորդ        |
| 10. տասներորդ         | 100. հարիւրերորդ        |
| 11. տասնումէկերորդ    | 101. հարիւրմէկերորդ     |
| 12. տասներկուերորդ    | 200. երկուհարիւրերորդ   |
| 13. տասներեքերորդ     | 1000. հազարերորդ        |
| 14. տասն(ու)չորսերորդ | 10.000. տասը հազարերորդ |
| 15. տասն(ու)հինգերորդ | 1,000,000. միլիօներորդ. |

Bemerkungen. 1. Der erste heißt առաջին, in zusammengesetzten Zahlen aber մէկերորդ Յ. Յ. հարիւր մէկերորդ = 101. Ebenso treten in zusammengesetzten Zahlen deren Einser 2, 3 oder 4 ist, die regelmäßig gebildeten Formen երկուերորդ, երեքերորդ und չորսերորդ wieder auf Յ. Յ. հարիւր երկուերորդ 102.

2. Dekliniert wird folgendermaßen:

|          |            |       |               |
|----------|------------|-------|---------------|
| Sing. N. | չորրորդ    | Plur. | չորրորդներ    |
| Gen.     | չորրորդի   |       | չորրորդների   |
| Instr.   | չորրորդով  |       | չորրորդներով  |
| Loc.     | չորրորդում |       | չորրորդներում |
| ABL.     | չորրորդից  |       | չորրորդներից. |

Übersetze: Շաբաթն (Woche) ունի եօթն օր՝ Կիրակի (Sonntag), երկուշաբթի (Montag), երեքշաբթի (Dienstag) չորեքշաբթի (Mittwoch), հինգշաբթի (Donnerstag), ուրբաթ (Freitag) ու շաբաթ (Samstag) — Կիրակին շաբաթուայ 1)

1) Siehe Sektion VII über die Deklination der einen Zeitabschnitt bezeichnenden Wörter.

առաջին օրն է — Այսօր հին տարուայ վերջին (letzter) օրն է — Այսօր ի՞նչ օր է. Այսօր ուրբաթ է — Հարիւր քառասներեքերորդ. — Հարիւր երկուերորդ. — Հարիւր երեքերորդ. — Հարիւր չորսերորդ. — Dies Buch ist sehr gut; ich lese es zum dritten Male (անդամ) — Es ist das siebente Jahr, daß wir hier wohnen (ապրիլ) — Es nähert sich das 1899. Jahr — Im wievielten (որ, որերորդ) Stock (յարկ) wohnt Ihr Vater? Er wohnt im zweiten Stock — Der Samstag ist der letzte Tag der Woche.

Verteilungszahlen werden durch *-ական* gebildet z. B. չորսական je vier, քսանական je 20. Merke: եօթնական, հիննական, տասնական. Man sagt aber auch վեց-վեց je 6, երեք-երեք je 3.

Bruchzahlen:  $\frac{1}{2}$ , Hälfte, քառորդ  $\frac{1}{4}$ . Die übrigen Bruchzahlen werden so gebildet, daß für den Zähler die Grundzahl, für den Nenner die Ordnungszahl oder das Zahlwort mit dem Suffix որդական eintritt z. B. մէկ տասներորդ = մէկ տասնորդական  $\frac{1}{10}$ .

Beide, alle zwei, alle drei werden übersetzt indem man der Grundzahl *և* anhängt und էլ = auch folgen läßt z. B. երկուսն էլ alle beide.

Das Suffix *անոց* bildet eigentümliche Ausdrücke zur Maß- und Wertbestimmung, ähnlich wie wir sagen: einen Zwanziger (nämlich einen Laib Brot um 20 Pfennig) z. B. երեսունանոց մի շիշ տուր gibt eine Flasche zu 30 (d. h. Kopfen<sup>1)</sup>), չորս բուբլիտանոց ծխախոտ Tabak um 4 Rubel (das Pfund).

Ungefähr, ca. wird ausgedrückt durch *մոտ* (vor die Zahl zu stellen!) z. B. տուր ինձ ֆունտը մոտ չորս բուբլիտանոց ծխախոտ geben Sie mir ein Pfund Tabak für ca. 4 Rubel.

<sup>1)</sup> Beispiel aus Hinf.

Adverbien und Konjunktionen.

A. Adverbien. Es gibt deren einfache und abgeleitete resp. zusammengesetzte. Einfache sind z. B. *այո* ja, *ոչ* nein, *միշտ* immer, *երբ* wann, *ուշ* spät. Die abgeleiteten werden von verschiedenen Redeteilen mittels der Endungen *անց*, *բար*, *բէն*, *եմն*, *էք*, *կի*, *պէս* abgeleitet z. B. *ինչպէս* wie? *երբեմն* wann? *Հայրաբար* väterlich, *երեսանց* außen, *ուսերէն* russisch. Andere bestehen aus Substantiven und Adjektiven im Nominativ oder in obliquen Fällen z. B. *վերևում* oben (von *վեր* hoch), *շուտով* (auch einfach *շուտ*) schnell (von *շուտ* schnell), *ներս* hinein, *ներսից* heraus.

Zusammengesetzte: Aus *որ* welcher und *անդ* Ort: *որտեղ* wo? aus *այս* dieser und *անդ* Ort: *այտեղ* hier, aus *այս* und *որ* Tag: *այօր* heute usw.

B. Konjugationen. Geben zu keinen besonderen Bemerkungen Anlaß. Die meisten kennt der Leser schon aus dem Vorhergehenden z. B. *ու*, *և* und, *էլ* auch, *բայց* aber, *իսկ* jedoch, aber, *կամ* oder, *թէ* daß, wenn, *եթէ* wenn? *որ* daß.

Übersetze: *Դուք կամենում էք քնել: Առայժմ (bis jetzt) ոչ. Կրպպատեմ մինչև Գանձակ (Elisavetpol) Հասնելը<sup>1)</sup>. Այնտեղ կրկամեմ թէյ, յետոյ (dann, hierauf) կը պահեմ (i. legen) քնելու — Ես գուրս (hinaus) կը գամ ծխելու — Դուք հեռու (weit) էք գնում — Հիմայ (jetzt) ժամը եօթն է — Ժամը տասներկուսին ոչ, աւելի ուշ կը Հասնենք (werden wir ankommen) — Ո՞ւր է գողը (Dieb — Կարելի չէ, որ այնպէս լինի — Թէև (obwohl) գումանից մեծ ես, բայց չես ուզում աշխատել (arbeiten; Beispiel aus Finck). Վաղը (morgen) կը գա՞ք ինձ Հետ զբօսնելու (spazieren gehen) — Եւ ցած (hinab) նայեց (նայեց*

<sup>1)</sup> Ich werde warten, bis wir Elisavetpol erreichen.



schauen) ջրին — նա ցած թըռաւ (fiog v. թռչել) կամուր-  
ջից (Brüde) — Իր բերանից (Mund) վայր (hinab) ընկաւ  
(վայր ընկնել fallen, hinabfallen) մնի կտորը.

Lösung der vom Deutschen ins Armenische zu übersetzenden  
Aufgaben.

1. Der Vorübungen.

1. Եղբայրը գրում է — աշակերտը սովորում է —  
Սշակերտը կարգում է — ուլ է խաղում — աշա-  
կերտը խաղում է.
2. Վարժապետը հարցնում է դասը — աշակերտը պա-  
տասխանում է — հաւր թռչուն է — ի՞նչ է կարգում.
3. Թռչունները երգում են — ի՞նչ են անում աշա-  
կերտները — աշակերտները խաղում են.
4. Եղբայրը ի՞նչ ունի — քոյրը գրիչ ունի — քոյրը  
դասը չգիտէ — ուլ ունի թուղթ և գրիչ.
5. Նա ուլ է = ուլ է նա — դու տղայ ես — դու որբ  
ես — նորբ տանն են.
6. Ո՞ւր են իմ գրիչները — մեր աշակերտները խաղում  
են — ուր է ձեր եղբայրը — իմ քոյրը աշակեր-  
տուհի է — նա մեր քոյրն է — մենք տանն ենք —  
նա իմ մայրն է.
7. Եղբայրը երկու գիրք ունի — մենք երեք սեղան,  
ունիք — ժամը քանիսն է — ժամը վեցն է —  
դու ի՞նչ ունիս — դուք ի՞նչ ունիք — մի ամիս,  
մի տարի — դու փոք ունիս — ունիմ — ուրբան —  
չորս բուրլի.
8. Մի փոքր տղայ — մեծ տունը — ուր է իմ նոր  
մատիտը — փոքր սեղաններ — երկու նոր սեղան —  
խելօք տղայ.

9. Ի՞նչով է գրում .քոյրը? — քոյրը գրում է քարէ-  
գրչով — քաղաքումը ուսումնարաններ կան — պապը  
գնում է քաղաք — հարեանը գալիս է քաղաքից .
10. Մարդը տեսնում է աչքերով — վարժապետը խօսում  
է աշակերտներից .
11. Աթոռների տակ — սենեակերի մէջ = սենեակե-  
րում — հօր մօտ — մօր մօտից — ծառի տակ խոտ  
կայ — ուր է քո քոյրը — նա սենեակումն (= սե-  
նեակի մէջ) է .
12. Դու խմում ես թէյ — նա շինում է սուն — ես  
խօսում եմ հայերէն և վրացերէն — մենք խօսում  
ենք թուրքերէն — ի՞նչ ես ասում — նա ի՞նչ է  
անում .

Section I. Գառը — շունը — աղմուկը — մի հովիւ —  
մի հայր — մի մայր — մի շուն .

„ II. Ես հայր ու մայր չունիմ — դուք (մի) շուն  
ունի՞ք .

„ III. Զիերը — վանդակներում — ձեռքերով —  
գուներ, գառներով .

„ IV. Զիերը — ձիեր — թիեր — թիերով — գի-  
նիներումը — ձիերի — գինուց .

„ V. Տերութիւնները — տերութիւնների — տերու-  
թիւնից — շարժումով — շարժումովը —  
շարժման մէջ .

„ VI. Սրովը — շների — թռչունների(ն) — ձիերը —  
երեսաներիցը — քթումը — քթերի — ծա-  
ղիկների — ծաղիումը — ծաղիկներումը .

„ VII. Օրուայ — գիշերուայ — ձմեռն — շաբաթները  
— շաբաթների — ամսիցը .



- Ջեֆ. VIII. Կարմիր գինի — կարմիր գինու — մի բաժակ  
կարմիր գինի — մի բաժակ սև [թէյ] — ճերմակ  
պատը — ճերմակ պատերը — ճերմակ պատե-  
րումը — սև պատից — նոր գինի — փոքր  
տուն — կանաչ, ծառ — ինձ պէտք է նոր  
գլխարկ .
- „ IX. Քո հայրը իմ հօրից հարուստ է — ձեր տունը  
մերիցը բարձր է — մեր տունը ձերիցը գեղեցիկ  
է — ձին էշիցը զորեղ և գեղեցիկ է — ես  
քեզանից աղքատ եմ — դու ինձանից ջանասէր  
ես .
- „ X. Մեզանից — մեզանում — նորանից — նրան —  
ինձ — քեզ — նրանից — ձեզնում — ձեզնից  
— քեզ — ձեզ — նոցա — ինձ հետ — քեզ  
հետ — նրա հետ — ինձ համար — նոցա  
համար — ձեզ համար — մեզ համար — Ձ, իմ  
փողը = փողա — քո փողը = (քո) փողդ —  
նրա հայրը — ձեր քոյրը — մեր մայրը —  
նրա տունը — քո տանից — ձեր տանում —  
ձեր մօրից — իմ փողով — ձեր ուսուցչի —  
իմիցը — քոնիցը — նրանիցը — մերինը —  
իմ հօրը — իմ մօրը — քո հօրը — նրա  
փողով .
- „ XI. A. այս գիւրքը — այս գրքերը — այն երեխա-  
ները — այդ մարդը — այս գրքերում(ը) —  
այս տներից(ը) — նրանց հետ — նա մեծ է  
— նոքա փոքր են .
- B. ումն է այս հին գիւրքը — ի՞նչպիսի գինի  
ունիս — ի՞նչով հաց ես կտրում — ում հետ

էք ապրում — Թ՞նչ օգուտ — քանի վճարեցիք  
— ո՞վ եկաւ .

Տե՛ղ. XII. Ուրիշ գինի տուր — նա գալիս է ամեն օր —  
ես ոչինչ չեմ ասել — ես ինքս ասացի —  
վաղը ամենքդ եկէք դպրոց — (մենք) ամենքս  
դպրոցումն էինք — իւրաքանչիւր աշակերտ  
պէտք է իր դասը սովորի — ոմանք ձեզինց  
դաս չեն պատրաստել — ինչ-ինչ պատճառնե-  
րով ես դաս չեմ պատրաստել .

„ XIII. Երեկ մենք քաղաքումն էինք — այսօր ես  
գիւղումն էի — ո՞ւր էիր դու այսօր — դու տանն  
էիր — այսօր ես ճաշեց յետոյ տանը կլինիմ  
(= կը լինիմ) — դու Ե՞րբ կըլինիս տանը .

„ XIV. Ես խօսում էի — ես խօսեցի — Թ՞նչ գնեցիր  
— ես թէյ, հաց ու գինի գնեցի — իմ սե-  
նեակումը ո՞վ է երգում — երեկ ո՞վ էր երգում  
Թատրոնում — երգի՛ր — երգեցէ՛ք — Թ՞նչ  
ես ուտում — ես հաց ու պանիր եմ ուտում  
— ո՞ւմ ես գրում — իմ հօրն եմ գրում —  
ես նրան կըգրեմ — կերգէս — ո՞վ կ'երգէ  
այսօր — ո՞վ գրեց քեզ — մայրս գրեց ինձ .

„ XV. Ճաշեց յետոյ կերթաս տուն — ճաշեց յետոյ  
մենք կըխաղանք — այսօր ես կերթամ քաղաք  
— դու առաջ վատ էիր կարդում իսկ, այժմ լաւ ես  
կարդում — այսօր առաւօտեան, երբոր դու  
նամակ էիր գրում, ես խաղում էի պարս-  
տիղումը .

„ XVI. Նա վախենում էր շնիցը — ես ուշացայ —  
Թ՞նչ ես կամենում — Թ՞նչ իմացաւ (քո) հայրդ  
— իմացի՛ր, ուր է նա ապրում — դու երբ  
կըստանաս նամակ վարժապետիցը .



Թե՛ս XVII. Զուր չկայ — ես ոչինչ չգիտեմ — քո տունը բարձր չէ, բայց գեղեցիկ է — մեր երեխայքը ջանասէր չեն — քո գլուխը չէ ցաւում — էգուց մենք չենք սովորիլ, որովհետեւ տօն է — շանը քար մի քցիր — ինչո՞ւ խորոված միս չէք ուտում — ես ժամանակ չունիմ — ես չեմ գնալ քաղաքը — ես չունիմ սպիտակ թուղթ — մի կարգար այս գիրքը — ամենեւին վաղ չէ :

- " XIX. A. Դուք գիտէք, ո՞վ է այս մարդը — չգիտեմ — Գինի կո՞յ — այո, ճերմակ էլ, կարմիր էլ կայ — դու փող ունիս՞ — չունիմ — գիտես, ո՞ւր է ապրում մեր բժիշկը — ոչ, չգիտեմ —
- B. Զուր տուր ինձ — դու նորտեղեց ես գալիս — ես կրգամ ուսումնարան էգուց առաւօտեան — ես ցոյց կըտամ վարժապետին քո նամակը — հաց տուէ՛ք այդ աղքատ մարդուն .
- C. Նա ի՞նչ ասաց — նա ի՞նչ է տալիս քեզ — ճրագը գիր սեղանի վրայ — ի՞նչ կերար — թո՞ղ կարգամ — բաց (արօ) սնդուկը — նա (վերա)դարձաւ երեկ — տա՛ր այս իրերը — ինչ՞ գնեցիր — շուտով դարձիր — նա բերեց ինձ համար գիրք — ինչո՞ւ բաց(ար)իր գուռը — վերցրու այս փողը .

" XXII. Անտառի մէջ = անտառումը — իմ սենեակի լուսամուտի առջև — սենեակի մէջ = սենեակումը — պահարանի վրայ — իմ եղբայրների հետ — աշակերտը գրում է թղթի վրայ — հայրը գնեց մատիտ և գրիչ քրոջ համար — քոյրը գնում է եղբօր մօտ, հօր մօտ, մօր մօտ, հօրա-

քրոջ մօտ — Պետրոսը գալիս է հօր մօտից,  
մօր մօտից, եղբօր մօտից — քոյր գնում է մօր  
հետ — եղբայրը խօսում է քրոջ հետ .

Лекц. XXI. Այս գիրքը շատ լավ է. ես այս երրորդ անգամն  
եմ կարդում — եօթերորդ տարին է, որ մենք  
ապրում ենք այստեղ — մօտենում է հազար  
ութը հարիւր ինքսունիններորդ տարին — ձեր  
հայրը նր յարկումն է ապրում — նա երկրորդ  
յարկումն է ապրում — շաբաթը շաբաթուայ  
վերջին օրն է .

Schlüssel zu der Wiederholungsübung über das Zeitwort.  
Lektion XXI.

Öffne die Türe! Schließe das Fenster! Schließe das Fenster!  
Setze dich und schreibe deine Lektion! Setze dich und lies laut!  
Der Lehrer spricht gut russisch. Heute kam der Lehrer sehr früh.  
Der Vater trinkt Wein, aber die Söhne trinken Tee. Gehe und  
bringe das Tischtuch! Nimm das Tischtuch weg! Bring den Sa-  
mowar! Gib die Flasche und das Glas! Der Großvater baut ein  
Haus. Der Schüler kann die Lektion nicht. Die Tante hat keinen  
Sohn. Ich frage, du antwortest. Ihr fraget, aber ich antwortete.  
Früher schrieb ich schlecht, aber jetzt schreibe ich gut. Ich habe zwei  
Hefte gekauft. Du hast vier Bleistifte gekauft. Er hat drei Bücher ge-  
kauft. Wir haben zwei Briefe bekommen. Der Vater frug den Sohn.  
Du hast drei Bücher und vier Lineale verkauft. Euer Spiegel ist  
vom Tisch gefallen. Meine Schwester ist vom Pferde gefallen.  
Wir werden bald eine Kirche bauen. Ich werde mit dem Lehrer  
sprechen. Wir werden morgen früh zu Hause sein. Wo sind deine  
russischen Bücher? Zu wem geht deine kleine Schwester? Sagt  
eurem lieben Vater! Hilf deinem armen Nachbar! Helft eurem  
armen Freund! Die Mutter hat ihrem Sohn zwei Bücher geschenkt.  
Mein Bruder hat einen Brief von seinem Freund bekommen.  
Morgen geht mein Vater nach Tiflis mit der Eisenbahn. Heute  
ist euer Onkel mit der Eisenbahn aus Tiflis gekommen. Der

Տիարմենից .

Lehrer geht in die Schule durch unsere Straße. Wann wirst du ein neues Haus bauen. Nimm meine neuen Kleider weg! Sucht mein russisches Buch! Du wirst von meinem Vater ein gutes Geschenk bekommen. Ich kenne deinen großen (ältesten) Bruder. Wir werden heute spazieren gehen. Wir haben unser hölzernes Haus verkauft. Heute habe ich schöne Pferde gesehen. Mein Onkel treibt Weinhandel. Euer Vater beschäftigt sich mit seiner Sache (s. Geschäft). Mein Bruder lebt von seiner Arbeit. Die Familie unseres Nachbarn nährt sich von Milchnahrung. Mein Bruder gilt (wird gehalten) für den ersten Schüler. Ich schneide Papier mit einem scharfen Messer. Du wirst Schüler genannt, weil du lernst. Man muß ein fleißiger Schüler sein. In eurer Schule gibt es sehr wenige Schüler. Auf hohen Bergen gibt es keine Wälder. Ich habe mein Buch verloren. Ich werde Sonntags kommen, wenn ich gesund bin. Hast du dein Buch gefunden? Ja, ich habe mein Buch gefunden. Ich habe deinen Brief meinem Vater gezeigt. Wann ist es Winter? Sommer ist es im Juni, Juli und August. Wann sind Sie geboren? Ich bin am 9. Januar geboren.

## Lesestücke und Gespräche.

### Wiederholungslesestück.

Fortsetzung des Lesestücks von Lektion XXI.

Այս երևելի իշխանը առաջին անգամ ստիպեց հայրին ցեղական կեանքից հրաժարուել, և երկրի<sup>1)</sup> ներքին զօրութիւնները կենդրոնացնելով<sup>2)</sup> պատկարելի տէրութիւն կազմեց, որով ոչ միայն իր հայրենիքը օտարական ասպատակութիւններից ազատեց, այլ և նրա սահմաններն

<sup>1)</sup> Über den Ausfall des *ի* s. Velt. VI.

<sup>2)</sup> S. Velt. XX.

ընդարձակեց: Իր տիրապետած երկրի անբնակ<sup>1)</sup> ու ամայի տեղերը գաղթական ժողովուրդներով լցրեց, կարգաւորեց ու շէնացրեց: Հայերը շրջակայ թշնամիների յարձակումներից ապահովուած՝ սկսեցին յաքաբերութիւններ կապել՝ արևելքից Մարացոց<sup>2)</sup> հետ, հարաւից Ասորեստանցոց ու Բաբելացոց հետ, իսկ արևմտեան կողմից Փոքր Ասիայ ի ժողովուրդների հետ: Սրանից բնականաբար պէտք է առաջանար գործունէութիւն երկրի մշակման<sup>3)</sup> մէջ և վաճառականական հաղորդակցութիւններ գրացի ազգերի հետ. այնպէս որ Ասիայի ազգերը Արամի օրերում<sup>4)</sup> սկսեցին ճանաչել հայերին և այս նահապետի անունով հայոց երկիրը Արմենիա կոչեցին, իսկ ազգն — Արմէն:

Արամին յաջորդեց նրա որդին Արա գեղեցիկ. Ասորեստանի Շամիրամ թագուհին վաղուց լսած լինելով<sup>5)</sup> Արայի գեղեցկութիւնը՝ իր ամուսին Նինոսի մահից յետոյ<sup>6)</sup> կամեցաւ նրա հետ ամուսնանալ, Մարդիկ<sup>7)</sup> ուղարկեց նրան մեծամեծ ընծաներով<sup>8)</sup> և խոստացաւ, որ եթէ իր կամքը կատարէ Հայաստանի հետ Ասորեստանի վրայ էլ կը թագաւորեցնէ նրան: Արա գեղեցիկը, որ ամուսնացած էր Նուարդ իշխանուհու հետ՝ մերժեց Ասորեստանի թագուհու առաջարկութիւնը: Շամիրամը զայրացած՝ մեծ գօրքով եկաւ<sup>9)</sup> Հայաստան, որպէսզի

1) Über die Aussprache des privativen *ան* f. Bemerk. zur Aussprache Fortsetzung.

2) Über Plur. der Wörter auf *ցի* f. Sect. III.

3) Declin. der Wörter auf *ում* f. Sect. V.

4) Wörter, die einen Zeitabschn. bezeichnen, f. Sect. VII.

5) S. umschreib. Konjug. Sect. XXI.

6) S. Sect. XXII.

7) Plur. v. *մարդ* f. Sect. VII.

8) Declin. der Wörter auf *յ* f. Sect. VI.

9) S. Sect. XIX, 2.

բունի ստիպէ Արային իր առաջարկութիւնն ընդունել: Պատերազմից առաջ [Թագուհին հրամայեց իր զորավարներին, որ աշխատեն հայոց իշխանին չսպանել<sup>1)</sup>], այլ ողջ բունեն և իր մօտ բերեն: Բայց Արան իր զօրքի յաղթուելը տեսնելով զիւցազնաբար ընկաւ խառնուրդի մէջ և իր ողջախոհութեան<sup>2)</sup> զոհ գնաց: Այն դաշտը, որ ներկուեց առաքինի նահապետի անունով՝ կոչուեց Արարատեան դաշտ, որ յետոյ ամբողջ նահանգի վրայ փոխուեց:

Պատերազմից յետոյ Շամիրամը մարդիկ ուղարկեց, որ զիակաների միջից<sup>3)</sup> Արայի մարմինը գտնեն, և մի բարձր տեղ դնել տուեց<sup>4)</sup>, ցանկալով կախարդութիւնով կենդանացնել նրան. բայց երբ զիակը սկսեց հոտել հրամայեց ծածուկ մի փոսի մէջ [Թաղել: Հայերը իրենց սիրելի իշխանի մահի վրայ գրգռուած՝ նորից գէնք առան<sup>5)</sup> և կամեցան պատերազմը շարունակել: Թագուհին հետևեալ հնարքը գործ գրեց նրանց հանդարտեցնելու համար: Իր սիրելիներից մէկին<sup>6)</sup> Արայի զգեստները հագցրեց և հեռուից հայերին ցոյց տալով հաւատացրեց նրանց, [Թէ աստուածներն Արայի վէրքերը լիղելով կենդանութիւն տուին<sup>7)</sup> նրան:

Պատմում<sup>8)</sup> է, [Թէ Շամիրամը հայոց աշխարհում կամեցաւ իր մեծագործութեան հետքը [թողնել, և վանի

1) Negat. Konjug. Velt. XVII.

2) Deffin d. Wörter auf [Թիւն f. Velt. V.

3) v. մէջ.

4) տալ = geben, hier: lassen.

5) Verb առնել f. Velt. XIX, 3.

6) v. մէկ.

7) v. տալ f. Velt. XIX, 2.

8) v. պատմել Passivbildung f. Velt. XVIII.

ծովի արևելեան փիլ վրայ մի հոյակապ քաղաք և ամարանոց շինելով՝ իր անունով կոչեց Շամիրամակերտ (այժմեան Վան քաղաքը): Շամիրամը իր համանուն Շամիրամակերտ քաղաքը շինելու համար ճարտարագետներ չգտնելով հայոց երկրում՝ վեց հազար ճարտարագետ ու երևելի արուեստագէտ և տասներկու հազար գործաւոր բերել տուեց Ասորեստանից և ուրիշ երկրներից, որոնք մի քանի տարի գործ դրին<sup>1)</sup> այն հրաշակերտ քաղաքը շինելու: Քաղաքը զարդարուած էր երկյարկանի և երեքյարկանի պալատներով և չքնազ բազանիքներով, տեսակ տեսակ և գոյնզգոյն քարերից շինուած: Նշանաւոր էին<sup>2)</sup> մանաւանդ ապառաժի մէջ փորուած ահագին սենեակներն<sup>3)</sup> ու սրահները: Ամբողջ քարաբլուրը, որի<sup>4)</sup> վրայ այժմ էլ կանգուն մնացած է Վանի հռչակաւոր բերդը՝ ծածկուած է սեպաձև արձանագրութիւններով: Հայերի առաջին պսակակիր թագաւոր պատմական աւանդութիւնը համարում է Պարոյր իշխանին, որ Մարաց Կիաքսար Ա. և Բաբելոնի Նաբուպալասար իշխանների հետ նինուէ մայրաքաղաքն առան և Ասորեստանը կործանեցին: Այս յաղթութիւնների պատճառով<sup>5)</sup> նա իր դաշնակիցներից թագ ստացաւ<sup>6)</sup>: Բայց Հայկի տոհմից ամենանշանաւորը համարում է Տիգրան առաջինը, որին երգիչները նկարագրում են իբրև մարմնով յաղթանգամ, զուարթերես ու քաղցրա-

1) v. գործ դնել anwenden, brauchen. Über die Konjug. v. դնել f. Velt. XIX, 3.

2) Konjug. von լինել f. Velt. XIII.

3) Über ն u. ը f. Velt. I. u. XII.

4) Definit. v. որ Velt. XI.

5) Auf Grund dieser Siege, wegen dieser Siege.

6) Konjug. der Verba auf անալ f. Velt. XVI.



Հայեաց, կեր ու խումի ժամանակ պարկեշտ, ցանկու-  
թիւնների մէջ չափաւոր, իմաստուն ու պերճախօս և  
ամեն բանի պիտանի: Արդարադատ ու հաւասարասէր  
լինելով՝ նա ոչ լաւերի վրայ էր նախանձում և ոչ  
նուաստներին արհամարհում, այլ ամենի վրայ անխտիր  
տարածում էր իր խնամքը:

Իր երկրի պայծառութեան վրայ հոգ տանելով  
Տիգրանը առանձին ուշք դարձրեց զօրքի բարեկարգութեան  
վրայ: Հեծելազօրքը, որի թիւը մինչև այն ժամանակ  
աննշան էր, բազմացրեց ու կարգաւորեց, իսկ հետեակ  
զօրքը կրթեց և ամենի ձեռքը սուր, տէգ ու նիզակ  
տուեց: Այն զօրքը, որ մինչև այն ժամանակ աղեղ ու  
պարսաքար բանեցնելով էր պատերազմում՝ այժմ  
վահանով ու երկաթէ զրահներով էր պատսպարուում:  
Այս զինական յաջողութիւնների արդիւնքն եղաւ երկրի  
քաղաքական կարգերի յառաջադիմութիւնը և վաճառա-  
կանութեան բարգաւաճումը: Տիգրանին ժամանակակից  
էր Մարաց Աժդահակ թագաւորի թու Կիւրոսը, որ իւր  
պապից թագաւորութիւնը խլելու գաղտնի միտք  
ունենալով՝ բարեկամական դաշն կապեց Տիգրանի հետ:  
Երկու իշխանների մտերմութիւնը կասկածի մէջ զցեց  
ծերունի Աժդահակին, այնպէս որ ցերեկը հանգիստ և  
գիշերը քուն չունէր: Այս տագնապի մէջ եղած ժամանակ  
Աժդահակը մի զարհուրելի երազ էլ տեսաւ, որ նրա  
խուովութիւնը աւելի սաստկացրեց: Իբրեւ թէ Հայոց  
ձիւնապատ լեռներից մէկի գագաթին մի բարձրահասակ  
ու գեղեցիկ կին էր նստած, որ ծննդականութեան ցաւով  
բռնուելով՝ յանկարծ երեք չափահաս կտրիճներ ծնեց:  
Առաջինը<sup>1)</sup> առիւծի վրայ հեծաւ և արեւմտեան կողմը

<sup>1)</sup> Ordnungszahlen f. Velt. XXIV.

դիմեց, երկրորդն<sup>1)</sup> ընծի վրայ նստած դէպի հիւսիս վազեց, իսկ երրորդը<sup>1)</sup> մի վեթխարի վիշապ սանձելով՝ Մարաց տէրութեան վրայ արշաւեց: Այս վերջինը հասնելով արքունի պալատի մօտ, ուր Աժդահակն իր աստուածներին զոհ էր մատուցանում թուա տանիքի վրայ և կամենում էր կուռքերը կործանել, թագաւորը մէջ մտաւ և կուռի բռնուեց այն կտրիճի հետ, բայց յաղթուեց և սպանուեց: Աժդահակը սարսափած զարթեց, գիշերով կանչեց իւր խորհրդականներին և տեսած երազը<sup>3)</sup> պատմելով համոզուեց, որ հայոց Տիգրան թագաւորի կողմից մեծ վտանք է սպառնում իր տէրութեանը: Աժդահակը ղեսպան ուղարկեց ընծաներով Հայոց թագաւորին և խնդրեց, որ Տիգրանուհի քրոջն<sup>4)</sup> իրեն կնութեան տայ, յուսալով որ քրոջ ձեռքով հեշտութեամբ կը կարողանայ եղբօրը<sup>5)</sup> կործանել: Տիգրանը համաձայնեց և մեծ փառքով Տիգրանուհուն ուղարկեց Մարաց թագաւորութեան Եկբատան մայրաքաղաքը: Աժդահակը իր քաղցր վարմունքով Տիգրանուհուն հաւատարմութիւնը գրաւելուց յետոյ, սկսեց փառասիրութեան փափուկ լարերը շարժել նրա սրտում, որպէս թէ Տիգրանը իր Զարուհի կնոջ փառասիրութիւնից գրգռուելով՝ կամենում է յափշտակել Մարաց թագաւորութիւնը: Խորագէտ Տիգրանուհին իմացաւ Աժդահակի դաւաճանութիւնը, երեսանց հաւանութիւն ցոյց տուեց, բայց ծածուկ հաւատարիմ մարդու ձեռքով<sup>6)</sup> ամեն բան յայտնեց եղբօրը:

1) Ordnungszahlen f. Beft. XXIV.

2) մէջ մտնել dazwischen treten, f. einmischen.

3) Den gesehenen Traum = den gehabtten Traum.

4) Deklin. v. քոյր ufw. f. Beft. VI.

5) Deklin. v. եղբայր ufw. f. Beft. VI.

6) Durch die Hand eines verlässigen Mannes = durch einen verlässigen Mann.

Ուստի երբ Աժդահակը Հայոց թագաւորին հրաւիրեց, որ երկու տէրութիւնների սահմանագլուխը գայ, իբրև թէ մի հարկաւոր գործի մասին խորհրդակցելու համար՝ Տիգրանը իր զօրքն առաւ և գնաց Մարաց վայ: Տիգրանուհին յարմար միջոց գտաւ իր եղբոր մօտ փախչելու, և թշնամական յարաբերութիւններն սկսուեցին: Աժդահակն անձամբ զուրս եկաւ իր թագը պաշտպանելու: Կուռի տաքացած ժամանակը, Տիգրանը իր նիզակի հարուածով Աժդահակին սպանեց, որով և պատերազմը վերջացաւ մարաց թագաւորութիւնն ընկաւ Կիւրոսին, որ Պարսկական հզօր պետութեան հեմքը դրեց<sup>1)</sup>: Իսկ Տիգրանը տասը հազարից աւելի զերիներ հանեց Մարաստանից, որոնց մէջ էին Աժդահակի առաջին կիներն Անոյշ անունով, շատ արքայորդիներ և արքայազն օրիորդներ, և բերեց Մասիս սարի արևելեան կողմը բնակեցրեց: Տիգրանը իր քրոջ հաւատարմութիւնն արժանապէս վարձատրեց, պարգևելով նրան իր նորաչէն Տիգրանակերտ քաղաքը, և նոյն գաւառի եկամուտներն յատկացրեց նրան, որպէս զի արքայավայել կեանք վարէ:

Տիգրանը Կիւրոսին գործակից և դաշնակից եղաւ նաև Լիւզացոց Կրեսոս թագաւորի և ապա Բաբելացոց զէմ:

Glossar zum Wiederholungslesestück.

Ա. Մ. Ս. Ս.  
 Աղտակել bejreien  
 ազգ Volk, Nation  
 ահագին ungeheuer  
 աղեղ Bogen (Waffe)

ամայի Wüsten, ungebaut, un-  
 bewohnt  
 ամարանոց Sommerresidenz  
 ամբողջ ganz, gänzlich  
 ամեն jeder

<sup>1)</sup> Հիմք դնել Grund legen.

ամուսին Gemahl, =in  
 ամուսնանալ heiraten, s. ver=  
 heiraten  
 այժմ jetzt, gegenwärtig  
 այժմեան jetztig  
 այլ sondern, aber, —և sondern  
 auch  
 այնպէս so  
 այս dieser  
 անբնակ unbewohnt  
 անգամ mal  
 անխտիր unterschiedslos  
 անձամբ persönlich  
 աննշան unbedeutend  
 անուն Name, անունով mit  
 Name, genannt  
 աշխատել sich bemühen, arbeiten  
 աշխարհ Welt, Land  
 ապահովացնել garantieren, ge=  
 fahrlos machen  
 ապառաժ Fels  
 առանձին besonder, besonders  
 առանց ohne  
 առաջանար entstehen  
 առաջարկութիւն Vorschlag  
 առաջին erster  
 առաքինի tugendhaft  
 առիժ Löwe  
 ասպատակութիւն Reiterein=  
 fall, Kavallerieangriff  
 Աստուած Gott  
 արդարադատ gerecht

արդիւնք Vorteil, Nutzen  
 արևելեան östlich  
 արևելք Osten  
 արևմտեան östlich  
 արժանապէս würdig  
 արհամարհել vernachlässigen  
 արձանագրութիւն Inschrift  
 արշաւել angreifen, einfallen  
 (in ein Land)  
 արքայազն aus königlicher  
 Familie  
 արքայալայել königlich, würdig  
 eines Königs  
 արքայորդի Prinz  
 արքունի königlich  
 ականդութիւն Tradition,  
 Überlieferung  
 ափ Ufer

Բ .

Բազմացնել vermehren  
 բաղանիք Bad  
 բայց aber  
 բան Ding, Sache  
 բանեցնել anwenden  
 բարգաւաճում Entwicklung,  
 Blüte  
 բարեկամական Freund=,  
 Freundschafts=, freundlich  
 բարեկարգութիւն Wohlthat  
 բարձր hoch  
 բարձրահասակ hochgemachten

բարձրանալ ՚. erheben  
բերդ Festung  
բերել nehmen, bringen  
բնական natürlich, բնականաբար (Adv.) natürlich  
բնակեցնել ansiedeln  
բռնել fangen, halten, nehmen  
բռնի mit Gewalt

Գ.

Գագաթ Gipfel  
գաղթական Auswanderer, Einwanderer  
գաղտնի heimlich  
գաւառ Bezirk  
գեղեցիկ schön  
գեղեցկութիւն Schönheit  
գերի Gefangener  
գիշեր Nacht, գիշերը nachts  
գլուխ Kopf  
գնդակ Kugel  
գոյնզգոյն bunt  
գործ Sache (Affäre), — գնել brauchen, anwenden  
գործակից Mitbesitzer, Teilhaber  
գործաւոր Handwerker  
գործունէութիւն Tätigkeit  
գտնել finden  
գրաւել erwerben (durch Tauschung)  
գրգռել erregen  
գցել werfen

Դ.

Դաշն Bündnis  
դաշնակից Verbündeter  
դաշտ Feld, Ebene  
դաւաճանութիւն Verrat  
դեսպան Gesandter  
դէմ gegen  
դիակ Leiche  
դիմել sich wenden nach  
դիւցազն Held, դիւցազնաբար heldenhaft  
դնել legen, setzen  
դուրս hinaus, außerhalb; —  
դնալ hervortreten  
դրացի Nachbar, benachbart

Ե.

Եթէ wenn  
Եկամուտ Eintünfte  
Երազ Traum, — տեսնել träumen  
Երբ wann, als  
Երգիչ Sänger  
Երեսանց äußerlich  
Երևալ, երևել sich zeigen  
Երևելի vorzüglich, ausgezeichnet  
Երեքյարկանի dreistöckig  
Երկաթ Eisen, երկաթէ eisern  
Երկիր Land, Territorium  
Երկյարկանի zweistöckig  
և und

2.

Չայրանալ f. erzürnen  
 զարգարել schmücken  
 զարթել aufwachen  
 զարհուրելի schrecklich  
 զգեստ Kleid, Kostüm  
 զէնք Waffe, — առնել die

Waffen ergreifen  
 զինական Waffen-  
 զոհ Opfer — զնալ f. opfern,  
 — մատուցանել Opfer

bringen, Opfer darbringen  
 զուարթերես mit kühnem Ge-  
 sicht

զրահ Panzer  
 զորավար Heerführer  
 զորութիւն Kraft  
 զօրք Heer

է.

էլ auch

ը.

ընդարձակել ausdehnen  
 ընդունել annehmen  
 ընծի Genit. v. հնծ (f. dieses)  
 ընծայ Geschenk

թ.

Թագ Krone  
 Թագաւորել regieren, herrschen  
 Թագաւորեցնել zum Herrscher  
 machen  
 Թագուհի Königin, Herrscherin

Թաղել begraben

Թէ daß

Թիւ Zahl, Anzahl

Թխել baden

Թշնամական feindlich

Թշնամի Feind

Թողնել lassen, loslassen

Թոնիր Heerd, Backofen

Թոռ Enkel, -in

ժ.

Ժամանակ Zeit, Frist, Ժամա-

նակակից gleichzeitig

Ժողովուրդ Volk, Menge

ի.

իբրև, — թէ als ob

իմանալ erfahren

իմաստուն weise

ինծ Leopard, Panther

իշխան Fürst, իշխանուհի

Fürstin

իակ aber, allein

իր sein, ihr usw.

լ.

լար Saite

լաւ gut

լեռ Berg

լեղել lecken

լինել sein

լուսին Mond



լսել hören  
 լցնել füllen, anfüllen  
 հ. հառնուրդ Gemenge (mêlée)  
 էլել entreißen  
 խնամք Fürsorge  
 խնդրել bitten  
 խոստանալ versprechen  
 խորագետ aufgeweckt, intelligent,  
 geschmeid  
 խորհրդական Ratgeber  
 խորհրդակցել beratschlagen  
 խում Belage, կերուխում  
 Belage, Orgie  
 խռովութիւն Aufregung, Er-  
 regung

Մ.

Մածկել bedecken  
 ծածուկ heimlich  
 ծերունի Greis  
 ծնել gebären  
 ծննդականութիւն Ent-  
 bindung  
 ծով Meer, Վանի — Wan=See

Կ.

Կազմել bilden  
 կախարդութիւն Zauberei,  
 Zauber  
 կամ oder  
 կամենալ wünschén, wollen  
 կամք Wille

կանգուն stehend, — մնալ  
 bleiben, bestehen bleiben  
 կանչել rufen  
 կապել anknüpfen  
 կասկած Verdacht, — ի մէջ  
 զցել Verdacht erwecken  
 կատարել erfüllen  
 կարգ Ordnung  
 կարգաւորել ordnen  
 կարողանալ können  
 կեանք Leben, — վարել Leben  
 führen, leben  
 կենդանացնել Leben einflößen,  
 auferwecken [Lebens=  
 կենդանութիւն Lebhaftigkeit,  
 կենդրոնացնել centralisieren, zu-  
 sammendrängen, konzentrieren  
 կեր Essen, Nahrung (s. auch  
 խում)  
 կէս Hälfte  
 կին Frau, Weib  
 կլորել, կոլորել abrunden  
 կնութիւն Ehe  
 կողմ Seite  
 կոչել nennen, heißen, benennen  
 կործանել zerstören, stürzen  
 կուռք Idol, Götzenbild  
 կռիւ Streit, Rauferei, Hand-  
 gemenge, կուռի բռնել hand-  
 gemein werden  
 կորիճ tapfer  
 կրթել erziehen



2.

Հաղցնել anziehen  
 Հաղորդակցութիւն Ver-  
 bindung  
 Համաձայնել einwilligen, bei-  
 stimmen  
 Համանուն gleichnamig,  
 homonym  
 Համար für, um zu  
 Համարել halten für  
 Համոզել überzeugen  
 Հայ Armenier, armenisch  
 Հայաստան Armenien  
 Հայրենիք Vaterland  
 Հանգիստ ruhig, Ruhe  
 Հանդարտեցնել beruhigen  
 Հանել wegführen  
 Հաննել erreichen  
 Հարաւ Süden  
 Հարկաւոր nötig  
 Հարուած Schlag, Stieb  
 Հաւանութիւն Billigung, Ein-  
 willigung  
 Հաւասարասէր die Gleichheit  
 liebend  
 Հաւատարիմ treu  
 Հաւատարմութիւն Vertrauen,  
 Treue  
 Հաւատացնել versichern  
 Հեծելազօր(.ք) Kavallerie  
 Հեծնել reiten  
 Հեշտութիւն Leichtigkeit

Հեռու weit, entfernt, — ից von  
 weitem  
 Հեռ mit  
 Հետեակ Fußvolk, Infanterie  
 Հետեեալ folgender  
 Հեռք Spur  
 Հզօր mächtig  
 Հիւթ Fundament, Basis, Grund,  
 — դնել begründen  
 Հիւսիս Nord  
 Հնար(.ք) List, Mittel  
 Հոգ Sorge, — տանել f. be-  
 kümmern um  
 Հոյակապ prächtig, großartig  
 Հոտել, հոտիլ, stinken, f. zer-  
 setzen  
 Հռչակաւոր berühmt  
 Հրատարուել entjagen  
 Հրամայել befehlen  
 Հրաշակերտ wunderbar  
 Հրաւիրել einladen

2.

Ձեռք Hand  
 ձիւնապառ schneebedeckt

ձ.

ձանաչել bekannt werden, — sein  
 ճարտարապետ Architekt

Մ.

Մահ Tod  
 մայրաքաղաք Hauptstadt



մանաւանդ besonders  
 մասին betreffend  
 մարդ Mann, Mensch  
 մարմին Körper  
 մեծագործութիւն große That,  
 Sieg  
 մեծամեծ groß  
 մերժել ablehnen  
 մէջ in, inmitten, innerhalb, —  
 մտնել f. մտնել  
 մի ein  
 միայն bloß, nur  
 մինչև bis, bis zu, sogar  
 միջոց Moment, Zeitpunkt  
 միտք Gedanke  
 մշակում Kultur, Bearbeitung  
 մտերմութիւն Intimität  
 մտնել, մէջ — sich einmischen,  
 dazwischen treten  
 մտա bei, zu

Յ .

Յաղթանդամ großen Körpers  
 յաղթել siegen, besiegen  
 յաղթութիւն Sieg  
 յաղթուիլ besiegt werden  
 յայտնել erklären, zu wissen tun  
 յանկարծ plötzlich  
 յաջողութիւն Fortschritt  
 յաջորդել folgen  
 յառաջադիմութիւն Erfolg  
 յատկացնել bestimmen

յարաբերութիւն Verbindung,  
 Zusammenstoß  
 յարձակում Angriff, Einfall  
 յարմար günstig  
 յախշտակել rauben  
 յուսալ hoffen

Ն .

Նաև sogar  
 նախանձել beneiden  
 նահանգ Gebiet, Bezirk  
 նահապետ Stammvater, Ge-  
 schlechtsahne  
 ներկուել f. färben  
 ներքին innerer  
 նիղակ Lanze  
 նկարագրել beschreiben  
 նշանաւոր berühmt  
 նոյն selbst, derselbe  
 նոր neu  
 նորաշէն neugebaut  
 նորից von neuem  
 նուաաս niedrig, gemein  
 նստել sitzen, f. setzen  
 նրա sein

Շ .

Շարժել berühren  
 շարունակել fortsetzen  
 շէնացնել beleben, bewohnt  
 machen  
 շինել bauen  
 շրջակայ umgebend

**Ո .**

**Ողջ** lebendig, lebend  
**ողջախոհճութիւն** Keuschheit  
**ոչ** nein, nicht, — **միայն** nicht  
 nur  
**որ** welcher, was; daß  
**որդի** Sohn  
**որպէս** wie, auf welche Weise; —  
**թէ** als ob, — **զի** damit, umzu  
 ու und  
**ուղարկել** schicken  
**ունենալ** haben  
**ուչք** Gefühl, — **դարձնել** die  
 Aufmerksamkeit wenden auf  
**ուստի** deshalb  
**ուրիշ** anderer

**Չ .**

**Չափահաս** ausgewachsen, er-  
 wachsen  
**չափաւոր** mäßig  
**չքնաղ** unvergleichlich

**Պ .**

**Պալատ** Palast  
**պայծառ** hell, klar  
**պայծառութիւն** Ruhm, Glanz  
**պաշտպանել** verteidigen  
**պապ** Großvater  
**պատերազմ** Krieg  
**պատկառելի** bedeutend  
**պատճառ** Grund, Ursache

**պատմական** historisch  
**պատմել** erzählen  
**պատսպարել** beschützen, ver-  
 teidigen  
**պարգևել** schenken  
**պարկեշտ** bescheiden  
**պարսաքար** Schleuderstein  
**պետութիւն** Herrschaft, Macht  
**պերճախօս** beredt  
**պէտք** Not, — է es ist nötig,  
 man muß  
**պիտանի** fähig, tauglich, geeignet  
**պսակակիր** gefrönter

**Ջ .**

**Ջուր** Wasser

**Ս .**

**Սահման** Grenze  
**սահմանադրուի** Grenze  
**սանձել** Zügel anlegen  
**սաստկանալ** stärker w., zu=  
 nehmen  
**սար** Berg  
**սարսափել** erschrecken  
**սենեակ** Zimmer  
**սեպ** Keil  
**սեպաձև** keilsförmig, Keil-  
**սիրելի** Geliebter, Günstling,  
 Liebling  
**սիրտ** Herz  
**սկսել** anfangen



սուր scharf; Säbel  
 սպանել töten, erschlagen  
 սպառնալ drohen  
 ստանալ erhalten  
 ստիպել veranlassen, nötigen,  
 lassen  
 սրահ Saal

Վ.

Վազել fliehen  
 վահան Schild  
 վաղուց längst, seit langem  
 վաճառական Händler, Kauf-  
 mann  
 վաճառականութիւն Handel  
 վարձատրել befohlen  
 վարձուներ Benehmen, Betragen  
 վերջացնել beendigen  
 վերք Wunde  
 վիթխարի Riese, riesig  
 վիշապ Drache  
 վտանգ Gefahr  
 վրայ auf

Տ.

Տահնայ Krise, Aufregung  
 տանիք Dach  
 տարածել ausbreiten  
 տարի Jahr  
 տաքացնել heiß machen, — w.  
 տեղ Ort, Stelle  
 տեսակ Art, Sorte, — ver-  
 schiedene, verschiedenartig

տեսանել = տեսնել  
 տեսնել sehen  
 տէգ Spieß, Lanze  
 տէրութիւն Reich, Herrschaft  
 տիրապետել sich bemächtigen  
 տոհմ Geschlecht, Familie

Ճ.

Ճանել säen  
 ցանկալ wünschén, wollen  
 ցանկութիւն Wunsch  
 ցաւ Schmerz  
 ցեղ Geschlecht, Stamm  
 ցեղական Stammes-, Geschlechts-  
 ցերեկ Tag, ցերեկը am Tag  
 ցոյց տալ zeigen

Փ.

Փախչել fliehen, entfliehen  
 փառասիրութիւն Ehrgeiz  
 փառք Ruhm, Ehre  
 փափուկ weich, zart, sanft  
 փոս Grube, Graben  
 փորել graben, ausgraben  
 փոխուել übergehen

Ք.

Քաղաք Stadt  
 քաղցր süß, sanft  
 քաղցրահայեաց mit sanftem,  
 angenehmen Blick  
 քանի wie viel; յի — einige

բար Stein

բարբաբլուր Steinhügel

քոյր Gen. քրոջ Schwester

քուն Schlaf

0.

Օտարական Fremder, fremd

օր Tag

օրհորդ junge Dame, Fräulein

Redensarten und Gesprächsformeln. (Westarmenisch)

Sei begrüßt, lieber Freund!

Բարի տեսանք, սիրելի բարեկամ:

Guten Abend, meine Dame!

Բարի իրիկուն, տիրուհի:

Wie geht es Ihnen?

Ինչպէս կանցնուք ձեր օրերը:

Wie steht es mit Ihrer Gesundheit?

Ինչպէս է ձեր առողջութիւնը:

Gott sei Dank, wir sind gesund.

Փառք Աստուծոյ առողջ ենք:

Nicht ganz wohl.

Ո՛չ այնչափ լաւ:

Das tut mir sehr leid.

Շատ կցաւեմ:

Aber jetzt geht es Ihnen besser?

Իսկ այժմ լաւ էք:

Ich bin sehr froh (darüber).

Շատ ուրախ եմ:

Sind die Ihrigen wohl auf?

Առողջ են ձեր ընտանիքը:

Grüßen Sie von mir Ihre werten Angehörigen.

Ողջունեցէք իմ կողմանէ ձեր սիրելի ընտանեացը:

Mit größtem Vergnügen; sehr gern.

Մեծ ուրախութեամբ; մեծ սիրով:

Bitte, setzen Sie sich!

Խնդրեմ նստել:

Nehmen Sie einen Stuhl.

Առէք աթոռը:

Wir haben uns schon lange nicht mehr gesehen.

Մենք արդէն բաւական ժամանակ է տեսնուած չենք:

Ich war drei Monate weg von hier.

Երեք ամիս է, որ ես այստեղ չէի:

Ostarmenisch.

Auf Wiedersehen! *Յտեսութիւն:*  
Auf baldiges Wiedersehen! *Մինչ ի շուտով տեսութիւն:*  
Danke sehr! *Շնորհակալ եմ:*

Ich habe eine Bitte an Sie. *Ես ձեզի մի խնդրելիք ունեմ:*  
Ich stehe zu Ihrer Verfügung  
(Diensten). *Ես պատրաստ եմ ձեր ծառայութեանը:*  
Erweisen Sie mir diesen Dienst  
(Güte). *Արէք ինձ այդ լաւութիւնը:*  
Ich bedaure Ihre Bitte nicht er-  
füllen zu können. *Կցաւեմ, որ չեմ կարող կատարել ձեր խնդիրը:*  
Ich bin bereit, Ihre Bitte zu er-  
füllen. *Ես յօժար եմ ձեր խնդիրը կատարելու:*

Wer ist da? *Ո՞վ է այնտեղ:*  
Hören Sie, kommen Sie her!  
Was befehlen Sie? *Լսեցէք, այստեղ եկէք:*  
Was wünschen Sie? *Ի՞նչ կը՛հրամայէք:*  
Geben Sie mir dieses Buch.  
Was will er? *Ի՞նչ կուզէք:*  
Was ist mit Ihnen? *Ի՞նչ կուզէ նա:*  
Was bedeutet das? *Ինչ է եղել ձեզ:  
Ինչ կնշանակէ այդ:*

Wie ist das Wetter heute?  
Sehr schön. *Ինչպէս է այսօր եղանակը:  
Շատ գեղեցիկ է:*  
Ist es windig?  
Nein, es ist sehr ruhig. *Հողմային է արդեօք:  
Ոչ, շատ հանդարտ եղանակ է:*  
Heute ist es sehr heiß.  
Es regnet stark. *Այսօր շատ տաք է:  
Սաստիկ անձրև կուգայ:*  
Es ist schmutzig draußen.  
Der Regen wird bald aufhören. *Դուրսը ցեխ է:  
Անձրևը շուտով կդադրի:*

Es wird ein schöner Tag.

Es ist weder heiß, noch kalt.

Es ist neblig.

Der Wind hat sich gelegt.

Es ist sehr staubig.

Vergangene Nacht fiel viel Schnee.

Morgen gibt es starken Frost.

Օրը գեղեցիկ կլինի:

Ոչ տաք է և ոչ ցուրտ:

Երկինքը ամպոտ է:

Քամին հանդարդեցաւ:

Շատ փոշոտ է:

Անցած գիշերը բաւական

ձիւն եկել է:

Վաղը սաստիկ ցուրտ կլինի:

Stehen Sie auf!

Es ist noch früh.

Ist es schon so spät?

Ich habe sehr lange geschlafen.

Ich werde sofort aufstehen.

Ziehen Sie sich schnell an!

Wo haben Sie meine Kleider  
hingelegt?

Gib mir ein reines Hemd!

Ziehen Sie Ihre Stiefel an!

Ելէ՛ք:

Դեռ վաղ է:

Արդէն այդպէս ուշ է:

Ես շատ ժամանակ քուն եղայ:

Ես այժմ կեղնեմ:

Հագնուեցէք շուտով:

Ուր էք դուք զրեւ իմ  
հագուստը:

Տուր ինձ մաքուր շապիկ:

Կօշիկներդ հագէք:

Wie viel Uhr ist es?

12 Uhr.

Also schon Mittag.

Ja, es ist  $\frac{1}{4}$  1 Uhr.

$\frac{1}{2}$  2 Uhr.

Sagen Sie mir bitte, wie viel  
Uhr es ist.

Jetzt ist es fast 7 Uhr.

Ո՞ր ժամն է:

12 ժամն է:

Ըսել է թէ կէսօր եղաւ:

Այո, մէկէն քառորդ է անցել:

Մէկէն կէս անցել է:

Ասացէք խնդրեմ, որ ժամն է:

Այժմ գրեթէ եօթ ժամն է:

Ich möchte einen Brief schreiben.

Wo ist das Dintensaf?

Ես կուզէի մի նամակ գրել:

Ո՞ւր է թանաքամանը:

Die Tinte ist sehr dick. *Թանաքը շատ թանձր է:*  
Bitte, leihen Sie mir ein Blatt *Մէկ թերթ թուղթ շնոր-*  
Papier. *հեցէք ինձի:*  
Was für Papier wollen Sie? *Որպիսի թուղթ կուզէք:*  
Das ist gleich. *Բոլորն էլ մէկ է:*  
Nun ist mein Brief fertig. *Ահա և նամակս պատրաստ է:*  
Bitte, schicken Sie ihn auf die *Խնդրեմ նամակատուն ու-*  
Post. *ղարկէք:*

Sprechen Sie Armenisch? *Դուք կխօսիք Հայերէն:*  
Ja, ein wenig. *Այո, քիչ մի կխօսեմ:*  
Lernen Sie seit langem? *Վաղուց է որ դուք կսովորիք:*  
Seit einem halben Jahr. *Կէս տարի կայ:*  
Für so kurze Zeit haben Sie *Դուք արդէն բաւական սովո-*  
ziemlich viel gelernt. *րել էք այդ կարճ միջոցում:*  
Was denken Sie über die *Ինչ կարծիք ունիք դուք*  
armenische Sprache? *Հայ լեզուի վերայ:*  
Ich denke, sie ist schwer. *Իմ կարծիքով դժուար*  
*լեզու է:*  
Die Aussprache ist für einen *Բառերի հնչմունքը քիչ մը*  
Fremden etwas schwer. *դժուար է օտար ազգի*  
*համար:*  
Das ist wahr, mir fiel es anfangs *Այդ իրաւ է, ինձ շատ*  
sehr schwer. *դժուար էր սկզբին:*

Ist das Mittagessen fertig? *Կերակուրը պատրաստ է:*  
Es ist erst zwölf Uhr. *Դեռ 12 ժամն է միայն:*  
Haben Sie nicht gefrühstückt? *Դուք չէք նախաճաշած:*  
Es ist aufgetragen; setzen wir uns. *Կերակուրը բերել են,*  
*երթանք սեղան նստենք:*  
Ich werde mich hierher setzen. *Ես այստեղ կնստեմ:*

|   |  |
|---|--|
| Wünschen Sie Suppe?                                 | Կըհրամայէք ձեզի թուփեց-<br>նել:          |
| Bitte, bedienen Sie sich.                           | Հրամայե՛ք:                               |
| Ich sehe, Sie haben kein Brot,<br>hier ist welches. | Կրտեսնեմ, որ հաց չունիք,<br>ահա ձեզ հաց: |
| Warum essen Sie keinen Braten?                      | Ինչո՞ւ խորոված միս չէք<br>ուտում:        |
| Ich bin schon satt.                                 | Ես արդէն կշտացայ:                        |
| Sie trinken gar keinen Wein?                        | Դուք ամենեին գինի չէք<br>խմել:           |
| Ich habe eben getrunken.                            | Ես այժմ խմեցի:                           |
| Bringt das Dessert.                                 | Պաղեղէն բերէ՛ք:                          |
| Stehen wir auf, wenn es ge-<br>fällig ist.          | Թէ որ կհաճիք, ելնենք<br>սեղանէն:         |

|   |                                       |
|---|---------------------------------------|
| Was werden wir nach dem Mittag-<br>essen tun? | Ինչ պիտի անենք կերակու-<br>րէն վերջը: |
| Was Ihnen beliebt.                            | Ինչ կամիք:                            |
| Gehen wir spazieren?                          | Երթանք զբօսնելու:                     |
| Einverstanden, wohin gehen wir?               | Ես յօժար եմ, ո՞ւր երթանք:             |
| Gehen wir in unsern Garten!                   | Երթանք մեր պարտեզը:                   |
| Wollen Sie auch mit uns kommen?               | Դուք էլ կուզէք մեզ հետ<br>գնալ:       |
| Nein, ich habe keine Zeit.                    | Ոչ, ես ժամանակ չունիմ:                |
| Was haben Sie zu tun?                         | Ի՞նչ գործ ունիք դուք:                 |

### Armenische Sprichwörter.

Folgende Sprichwörter sind aus dem „Sbornik materialov dl'a opisaniya mestnostej i plemën Kavkasa“ (Bd. II, Tiflis 1882) entlehnt. Sie sind meist in der Sprache der Armenier des Nachitševaner Bezirks (Auswanderer aus Persien) gegeben.

- Հարեանիդ մի կող ուզիր, որ  
Աստուած քեզ երկու տայ: Wünsche deinem Nachbar eine  
Ruh, damit dir Gott zwei gebe.
- Շանը մի ծեծիր տիրոջ  
խաթրու: Schlag den Hund nicht aus  
Achtung für seinen Herrn.
- Շանը քար մի քցիր, որ նա  
չկծի: Wirf keine Steine auf den Hund,  
damit er nicht beißt.
- Շատ կմտածես, շուտ  
կպառաւես: Wenn du viel denkst, wirst du  
bald alt.
- Ինչ կասես, նա կլսես: Was du sagst, hörst du auch  
(wieder).
- Շատ խօսողը քիչ կիմանայ: Was spielt spricht, lernt wenig.
- Աղ ու հաց թշնամու աչքը  
կծակէ: Salz und Brot haben des Feindes  
Augen aus.
- Իշտահը ատամի տակ է: Der Appetit ist unter den Zähnen.
- Տղան չլայ, մայրը ծիծ  
չխտայ: Wenns Kind nicht weint, gibt  
ihm die Mutter die Brust nicht.
- Ի՞նչ է հասկանում էշը, թէ  
ինչ է նուշը: Was weiß der Esel davon, was  
'ne Mandel ist.
- Աստուծոյ ոչխարին գայլը  
չի ուտի: Gottes Schaf frißt der Wolf nicht.
- Առաջ մտածիր, յետոյ սկսիր: Zuerst denk, dann beginn's.
- Երկաթը տաք տաք կծեծեն: Man schmiedet das Eisen, solange  
es warm ist.
- Ջուր ընկնողը անձրևից չի  
զախենայ: Wer ins Wasser gefallen ist,  
fürchtet den Regen nicht.
- Խելոքին մի, յիմարին քանի  
կուզես: Dem Gescheiten einmal, dem  
Dummen so oft du willst!).
- Էշի անունն էշ է, յիմարն  
էշից գեշ է: Der Esel heißt Esel, aber der  
Dumme ist noch dümmer.

1) D. h. dem Gescheiten genügt es, einmal etwas zu sagen, beim Dummen nützt es aber nichts.

- Դանակը հանաք չի սիրէ: Messer liebt nicht Spaß.  
Կատուին խաղ է, մկանը մահ: Für die Katze ein Spiel, fürs  
Mäuschen der Tod.  
Ինչ տեղ հաց, էն<sup>1)</sup> տեղ կաց: Wo's Brot gibt, da bleib!  
Որտեղ գինի, այնտեղ քնի: Wo's Wein gibt, da schlaf!

Die folgenden Sprichwörter sind aus „Emins ethnographischem  
Sammelwert“ Bd. I. Sie stammen aus der Gegend von Alexandropol  
(Griwaner Gouvernement).

- Ամեն մարդի դարտը իրան համար դավա է: Jedem Menschen wird der eigene  
Schmerz zur Arznei.  
Ամեն սրտի մէջ մէկ ասլան է պարկած: In jedem Herzen steckt ein Löwe.  
Առաջ գլուխը, յետոյ ոտը: Zuerst der Kopf, dann der Fuß.  
Առաջի խօսողը չ'գիտէ թէ յետինն ինչ կասէ: Wer zuerst spricht, weiß nicht, was  
der folgende sagen wird.  
Լեզուն դանակից սուր է: Die Zunge ist schärfer als ein  
Messer.  
Մոզից մի գգալ ջուր վերց-  
նես, ի՞նչը կըզգաս: Wenn du aus dem Meer einen  
Löffel Wasser nimmst, was fehlt  
dann?  
Կամ աղն է պակաս, կամ  
մաղ: Entweder fehlt das Salz, oder  
das Sieb.  
Հայի խելքը գլխումն է, Վրացուեր աչքերում: Der Armenier hat seinen Verstand  
im Kopf, der Georgier in den  
Augen.  
Մենձ խօսելով իլաւ չի  
եփի, եղ ու բրինձ է  
հարկաւոր: Vom vielen Sprechen kocht der  
Pilaw nicht; Butter und Reis  
brauchs dazu.

<sup>1)</sup> = այն:

Anekdoten über Mulla Nasr-Eddin<sup>1)</sup>.

1.

Մի անգամ Մուլլա Նասր-էղ-գինին հարցրին. Einmal fragten sie den Mulla Nasr-Eddin:

— Մուլլա, քո կարծիքով ո՞վ է ամենից յիմար: „Mulla, wer ist nach deiner Meinung der Dümmsie?“

— Նա ո՞վ մարդկանց երեսին կասի ճշմարտութիւնը, պատասխանեց Մուլլան: „Wer den Leuten die Wahrheit ins Gesicht sagt“, antwortete Mulla.

2.

Մուլլան ձիուց վայր ընկաւ: Eines Tages fiel Mulla vom Pferde.

— Այնթ չէ քեզ, հարցրին: „Schämst du dich nicht?“ fragten sie ihn.

— Է, ասաց, միթէ կարելի է երկրի և երկնքի մէջ մնալ: „Ach“, sagte er, „kann man denn zwischen Erde und Himmel (hängen) bleiben?“

3.

Գիշերը Մուլլի երեխան լաց եղաւ, կինը ձայն տուեց Մուլլին, թէ վեր կաց օրօրի՛ր, չէ որ երեսայի կէսը քոնն է: Nachts weinte einst Mulla Nasr-Eddins Kind. Seine Frau rief ihn und sagte: „Steh auf und wiege das Kleine, die Hälfte davon gehört ja dir.“

— Թող իմ կէսը լաց լինի, ասաց Մուլլան, դեռ դու քո կէսն օրօրի՛ր: „Meine Hälfte kann weinen“ versetzte Mulla, „wiege du nur die deine“.

1) Աւս Ե: Լալայեան. Մուլլա Նասր-էղ-գին: Էփիս 1903.

4.

Մի անգամ մինը եկաւ և Մոլլա նասր-էդ-դինի էջը խնդրեց: „Սպասիր, գնամ հարցնեմ, թէ կը կամենայ՞ գալ և եթէ հաճի, իսկոյն հետս կը բերեմ“, ասաց Մոլլան և գնաց ակոս: Մի քանի րոպէ մնաց այնտեղ և վերադառնալով պատասխանեց. „Էջը չի կամենում գալ, ասելով, որ եթէ ինձ նրանց ձեռքն յանձնես, ոչ միայն ինձ չարաչար պիտի ծեծեն, այլ և կ'նոջդ մի լաւ պիտի հայհոյեն“:

Einst kam einer zu Mussa Nasr-Eddin und bat ihn um seinen Esel. „Wart, ich frage ihn ob er will und wenn er mag, dann bring ich ihn gleich mit“, sagte der Mussa und ging in den Stall. Er blieb ein wenig dort und sagte dann, als er zurückgekommen war: „Der Esel will nicht; er sagt, wenn du mich in ihre Hände gibst, werden sie mich nicht nur grausam schlagen, sondern auch deine Frau beschimpfen 1)“.

5.

Մոլլան մի անգամ տանը նստած մաստակ էր ծամում. դրսից մինը կանչեց նրան. Մոլլան մաստակը բերանից հանեց, կպցրեց քիթն և դուրս ցնաց:

Mussa saß einmal zu Hause und laute Kauharz. Von draußen rief ihn jemand. Er nahm das Kauharz aus dem Munde, klebte es sich auf die Nase und ging hinaus.

Ինչի ես մաստակը քիթդ կպցրեմ, Մոլլա, հարցրեց կանչողը:

„Warum hast du dir das Harz auf die Nase geklebt“, frug ihn der, welcher ihn gerufen hatte.

— Մարդ իրեն ապրանքը միշտ աչքի առաջ պիտի

„Man muß sein Gut immer vor Augen haben, sonst hat man

1) Spielt auf die orientalische Sitte an, ein gemietetes Tier nicht nur selbst zu beschimpfen, sondern sich auch in allen möglichen Schmähungen gegen seinen Besitzer zu ergehen.

ունենայ, թէ չէ խէր չի  
ունենալ, բացատրեց ծան-  
րու-թեամբ Մուլլան : feinen Nutzen“ antwortete  
Mulla mit Wichtigkeit (Nach-  
druck).

6.

Մենք իր որդուն բերեց Յեման Բրաչտե Բեյն Եօհն շու  
Մուլլի ժօա ե խնդրեց որ  
Կարգալ գրել սովորեցնի : Mulla und bat diesen, er solle  
ihn Lesen und Schreiben lehren.

Մուլլան իբր վարձատրու-  
թիւն մի թուման պա-  
հանջեց : Der Mulla forderie als Honorar  
1 Tuman <sup>1)</sup>).

Վայ, ինչ ես ասում, Մուլլա,  
ասաց երեխայի հայրը, մի  
թումանով մի էշ կառնեմ : Wehe, was sagst du, Mulla, sagte  
der Vater des Jungen, um ein  
Tuman kann ich einen Esel  
kaufen.

— Ա՛ն, պատասխանեց Մուլ-  
լան, այն ժամանակ որդուդ  
հետ միասին երկու էշ  
կուռնեսա : Kauf einen, antwortete Mulla,  
mit deinem Sohn macht das  
dann zwei.

7.

Մի օր Մուլլա նասր-էր-դինը Եւնե Եաջ Բեյն Եօհն շու  
այնքան խօսեց կնոջ հետ,  
որ վերջինս սաստիկ ձան-  
ձրանալով ասաց նրան . Eines Tages sprach Mulla Nasr-  
Eddin so viel mit seiner Frau,  
daß diese endlich sagte :

— Հերիք է, այ մարդ,  
գլուխս տարար, գնայ  
հեռացիր ինձնից : Es reicht, Mann, mein Kopf  
schmerzt, geh weg von mir.

Մուլլան այս կծու խօսքերից  
վերաւորուեց, խկոյն ձի  
Mulla wurde von diesen scharfen  
Worten verletzt, setzte sich so-

<sup>1)</sup> Ist jetzt im Kaukasus = 10 Rubel.

նստաւ և երկու օրուայ ճանապարհ կտրեց. Ապա այնտեղեց մի մարդ ուղարկեց կնոջը հարցնելու թէ բաւական է արդեօք այդքան տարածուած իւնը, թէ էլի հեռանայ:

fort aufs Pferd und ritt zwei Tagereisen weit weg. Von dort aus schickte er einen Mann mit der Frage ob diese Entfernung genüge, oder ob er noch weiter reisen sollte.

8.

Մի անգամ Մուլա Նասրէդդինը գրկեց մի մեծ կաթսայ է խնդրում, որ փլաւ եփէ: Դրկիցը տալիս է և Մուլան հետևեալ օրը վերադարձնում է մի փոքրիկ կաթսայ էլ հետը:

Einmal bat Mulla Nasr-Eddin seinen Nachbarn um einen großen Kessel, um Pilav zu kochen. Der Nachbar gab ihm diesen und am folgenden Tag brachte er einen großen und einen kleinen Kessel zurück.

— Այս ի՞նչ կաթսայ է, հարցնում է գրկիցը:

Was ist das? fragte der Nachbar.

— Ձեր կաթսայի ճուտն է, նա երէկ երեկոյ մեր տանը ծնեց:

Das ist das Junge von eurem Kessel, der hat gestern abend in unserm Hause geboren.

Դրկիցը մտքում ծիծաղում է Մուլա Նասրէդդինի վրայ և վերցնում է երկու կաթսան էլ:

Der Nachbar lachte heimlich über Nasr-Eddin und nahm die beiden Kessel.

Մի քանի օրից Մուլան նորից է խնդրում մեծ կաթսան: Դրկիցը ուրախութեամբ տալիս է, յուսալով, որ այս անգամ էլ կը ծնի: Սակայն անցնում է մի քանի օր, բայց Մուլան չի վերադարձնում կաթսան.

Nach einigen Tagen entlehnte Mulla von neuem den Kessel. Der Nachbar gab ihn gerne her, weil er hoffte, daß der Kessel auch diesmal wieder gebären würde. Aber es vergingen einige Tage und Mulla brachte keinen Kessel zurück.

- Մոլլա, ի՞նչ եղաւ կաթ- „Ուսա, was ist aus meinem  
սաս, հարցնում է զրկեցը: Kessel geworden“? frug der  
Nachbar.
- Մեռաւ, պատասխանում „Gestorben ist er“, antwortete  
է Մոլլան լըջութեամբ, Մուսա, ernst „mögest du gesund  
դու ողջ լինիս. bleiben“.
- Ի՞նչ ես խօսում, բար- Was sagst du da, zürnte der  
կանում է Մոլլան, կաթ- Nachbar, kann ein Kessel  
սան էլ մեռնի՞: sterben?
- Եթէ կճնի՞, ապա և կը Wenn er gebären kann, kann er  
մեռնի, պատասխանում է auch sterben, antwortete Musä;  
Մոլլան, ինչի՞ ծնուելուն warum hast du ans Gebären  
հաւատացիր և մեռնելուն geglaubt und ans Sterben  
չես ուզում հաւատալ: willst du nicht glauben.

„Anekdoten über Hobos“<sup>1)</sup>.

- Ենողի քահանան մի գիշեր Der Schnoյ'er Geistliche ging  
գնում է Հորոսի գէղից einmal Nachts zu dem Heu-  
խոտ գողանալու: Հորոսը hausen des Hobos um Heu zu  
վրայ է հասնում և ստում. stehlen. Hobos traf ihn dabei  
und sagte:
- Տէր, տէր, այդ ի՞նչ ես — Herr, Herr, was tust du denn  
անում: da?
- Թէ ոչինչ, տանում եմ, — „Gar nichts, ich nehme (Heu),  
որ ձեր ննջեցեալների um für Eure Verstorbenen ein  
համար հոգոց ասեմ պա- Gebet zu sagen“, antwortete  
տասխանում է քահանան: der Geistliche.
- Տօր, տէր տէր ջան, տօր, — „Nimm, lieber Herr, nimm,  
մի քիչ էլ աւելի տար, nimm ein bisschen mehr, damit  
որ լիարեբան ասես, աւե- du mehr (Gebete) sagst“, fügte  
լացնում է Հորոսը: Hobos hinzu.

<sup>1)</sup> Աս յ: Կալպեան, Հորոս: Լիվի 1903. Hobos ist der typische Dummkopf.

Մի անգամ Հորոսը գուժան վարելիս մի մողէս է լոյսն ընկնում: Հորոսը գուժան կանգնեցնել է տալիս և ձեռի չէկիով խիտում մողէսն սպանում, ապա ինքնաբաւական կերպով սկսում է պելները սրել:

Հօտաղներից մինը հարցնում է. Ա՛ տղէք, այդ ո՞վ սպանեց:

— Դէ՛հ չգիտէք, որ այդպիսի բաները միայն Հորոսի ձեռքից կրգան, էլ ի՞նչ էք հարցնում, պատասխանում է ինքը Հորոսը:

Մի անգամ Հորոսը հունձ անելիս ձեռքը օրադով կտրեց: Տուն վերադարնալով գնաց շինող դարբնի մօտ և ասաց:

— Տօ անաւեր, որ գիտէիր օրադիդ հունարը կտրելն ա էլ ուր ինձ տուի՛ր:

Մի անգամ Հորոսը Թիֆլիս գնալիս կոտա գիւղում իջնում է ձիուց, մտնում մի գինետուն, մի կոպէկ շրղկացնում դախլի վրայ և ատում.

Als Hobos einmal pflügte kam eine Eidechse zum Vorschein. Hobos stellte den Pflug hin und tötete die Eidechse mit einem Schlage seines Stodes. Dann fing er an selbstgefällig seinen Schnurbart zu drehen.

Einer von den Hirten fragte: He, Leute, wer hat denn das (Ding da) getötet?

Oh, wißt ihr denn nicht, daß solche Sachen nur von der Hand des Hobos kommen, was fragt ihr denn?“ antwortete Hobos.

Einmal schnitt sich Hobos beim Getreideschneiden mit der Sichel. Als er nach Hause zurück kam, ging er zum Schmied, der sie gemacht hatte und sagte: Dein Haus soll einstürzen! 1)

Wenn du deiner Sense Kraft 2) kennst, warum hast du sie mir dann verkauft?

Als H. einmal nach Tiflis ging, stieg er im Dorfe Kotsa vom Pferd, trat in eine Schenke, schleuderte einen Kopeten auf den Tisch und sagte:

1) Eine Verwünschung.

2) Kraft, Kunststück, Fertigkeit.

- Առ էս կոպէկը, համ մի գրուանբայ հաց սու, համ մի բաժին խաշ, համ էլ խուրդէն ետ սու: Nimm den Kopeken und gib mir ein Pfund Brot, und eine Portion Chasch<sup>1)</sup> und gib mir heraus.
- Ինչ ես ասում, Ջիբօ, պատասխանում է խանութպանը: Was sagst du, Zibo<sup>2)</sup>, antwortete der Schankwirt<sup>3)</sup>.
- Թէ կնյ մի քիչ էլ զիբօ սու, վրայ է բերում Հորսը, կարծելով թէ զիբօ սխտոր է նշանակում: Wenn es welchen gibt, so gib auch ein bißchen zibo, fügte hinzu Hovos, glaubend zibo bedeute Knoblauch.

Մի թուրք սար գնալիս իւր կաղ ուղտը մի Շնողեցու յանձնեց, որ պահէ մինչև իւր վերադարձը: Ein Tatare, der in die Berge ging, vertraute einem Bewohner von Šnoy sein lahmes Kamel an, damit er es bis zu seiner Rückkehr pflege.

Մի օր այս կաղ ուղտը արածելիս հետզհետէ հեռացաւ, բարձրացաւ քերձի ծայրին և երբ կամենում էր ուտել ժայռի ծերպին բուսած ծառի տերևները սայթակեց, գլորուեց ձորը և ընկաւ Գերեա գետը խեղուեց: Beim Weiden entfernte sich dieses lahme Kamel eines Tages, stieg auf einen Berg und als es die Blätter eines in einer Spalte wachsenden Baumes fressen wollte, stolperte es, fiel den Abhang hinauf und erkrank im Flusse Debet.

Շնողեցին գնաց քերթեց, կաշին ու գլուխը բերեց սուն, որ ժամանակին տիրոջը ցոյց տայ: Der Šnoy'er häutete es ab, nahm die Haut und den Kopf mit nach Hause um sie seinerzeit dem Eigentümer zu zeigen.

<sup>1)</sup> Georgische xasi; eine Art Suppe mit Kutteln und Knorpeln.

<sup>2)</sup> Ein Schimpfname oder verächtlicher Spitzname.

<sup>3)</sup> Xan ist im Kaukasus eine Kombination von Vaden und Schenke.

Աշնանը թուրք իջաւ սարեց  
և եկաւ Շնողեցու ձօռ,  
ասաց.

„däväm nêdžä dy, dostum,  
Kökölyp“<sup>1)</sup>

Շնողեցին թուրքերէն չգի-  
տեանալով կանչեց Հոբոս-  
սին, նրան պատմեց ուղտի  
գլխին եկած փորձանքը և  
խնդրեց, որ մի առ մի  
հաղորդէ թուրքին:

Հոբոսն սկսեց:

Թուրք անպէր,

դաւէդ քերծի գլխին արա-  
ծլերդդի<sup>2)</sup>, կրծլանդի,  
կրծլանդի<sup>3)</sup>

Մտռի ճիւղ քը ծլծլանդի<sup>4)</sup>

Ջուտա ոտով դուրս պլծլ-  
լանդի<sup>5)</sup>,

Երա դիւշտի<sup>6)</sup> թմիլլանդի<sup>7)</sup>

Սուայ դիւշտի<sup>8)</sup> զլլանդի<sup>9)</sup>

Ագեար ինանսերսան<sup>10)</sup>

Im Herbst kam dieser vom Berge  
zurück und ging zum Šnoyer  
und sagte:

Was macht mein Kamel, Freund,  
ist es fett geworden?

Der Šnoyer verstand nicht tatarisch,  
rief Hobos, erzählte ihm das  
Unglück, welches dem Kamel  
widerfahren war und bat ihn,  
dies dem Tataren in den Einzel-  
heiten mitzutheilen.

Hobos fing an:

Tatarischer Bruder,

dein Kamel weidete auf dem  
Berge und nagte (Gras)

Des Baumes Zweig hat es  
gerupft (?)

Mit beiden Füßen hat es sich los-  
gerissen

Zur Erde fiel es und ist hinunter  
geplumpft

Ins Wasser fiel es und hat ge-  
pustet

Wenn du's nicht glaubst

1) Tatarisch.

2) Erfundene Form aus arm. արածել mit tat. Endung.

3) Erfundene Form aus arm. կրծել mit tat. Endung.

4) Erfundene Form mit tat. Endung.

5) Erfundene Form aus arm. պրծնել mit tat. Endung.

6) jerä düsdi, tat. es fiel zur Erde.

7) Erfundene Form, lautmalend, mit tat. Endung.

8) sus düsdi, tat. es fiel ins Wasser.

9) Erfundene Form, lautmalend, mit tat. Endung.

10) Ägär inanmirsän (t.).

Բու բաշի, բուգա կաշի<sup>1)</sup> Da ist sein Kopf und auch seine Haut  
 Ըստար արար, բտար Wenn du willst, nimms mit,  
 էշի<sup>2)</sup>: wenn du willst, schau dirs an.

Հորոսը երեք աղջիկ է ունե- Ծոբոս hatte drei Töchter und  
 նում, երեքն էլ կլտիկ alle drei hatten einen Sprach-  
 (թլուսա): Մի ուրիշ fehler. Aus einem andern Dorje  
 գեղից Հորոսի երեքը եկ- kamen Leute die von Ծոբոս  
 անունը և նրա երեք աղջիկ berühmtem Namen und seinen  
 ունենալը լսելով գալիս drei Töchtern gehört hatten, um  
 են աղջիկներին տեսնելու diese zu sehen und zu freien.  
 ու նշան տալու. Հորոսը Als Ծոբոս sah, daß die drei  
 տեսնելով որ տղերքը Männer aus gutem Hause  
 նոյնպէս երեքը մարդ- waren, — der eine aus Kulpa  
 կանց անից են, մինը Ղա- im Kasach'schen<sup>3)</sup>, Sohn eines  
 զախի Կողբա գեղի Այօ, der Hausbesizers Namens Ayo, der  
 տանուտիրոջ, միւսը Աթօ andere Sohn des Richter Atho,  
 գատաւորի, իսկ երրորդը und der dritte der Sohn des  
 Ղուկաս երէցփոխի տղա- Geislichen Lukas — wünschte er  
 ներն են, սաստիկ ցան- sehr stark, seine drei mit Sprach-  
 կանում է, որ իւր կլտիկ fehlern behasteten Töchter ihnen  
 աղջիկներին սրանց շըլըն- auf die Hälse zu binden und  
 քին կապէ, ուստի և deshalb empfahl er diesen streng,  
 խստիւ պատուիրում է bis nach der Hochzeit weder  
 աղջիկներին, որ մինչև mit den Bräutigamen noch mit  
 հարսանիքի աւարտը ոչ փեսաների և ոչ էլ մի որևէ  
 մարդու հետ չխօսեն:

Երբ փեսացուները նստում Als sich die Freier zum Essen  
 են հաց ուտելու, յան- setzten, kam plötzlich aus einem  
 կարծ մի անկիւնից մի Winkel eine Maus hervor.  
 մուկն է գուրս գալիս: Als die älteste das sah, sagte

<sup>1)</sup> Bu baši, buda (kaši) t. (mit Ausnahme von kaši).

<sup>2)</sup> Istär ap'ar, istär (t.) esī (aus arm. աշիլ vnlg. էշիլ).

<sup>3)</sup> Geogr. Irrtum; Kulpa ist nicht im Kreise Kasach.

Այս տեսնելով մեծ աղ-  
ջիկը սխալմամբ ասում է.  
վույ, Տէ՛ն, Տէ՛ն, մուտը,  
մուտը<sup>1)</sup>: Միջնակն աւե-  
լացնում է. յետ ծատը<sup>2)</sup>  
նտաւ<sup>3)</sup>, իսկ ամենափոքրը  
խրատում է սրանց թէ՛  
„Ատին ասաւ ոչ որ տօսի<sup>4)</sup>,  
ես ոնչ տօսել եմ, ոնչ  
տխօսեմ“<sup>5)</sup>:

sie (fehlerhaft): „Eine Maus  
(Maus). Die mittlere fügte  
hinzu: „Sie ist ins Dach  
(Dach) zurück“; die jüngste aber  
verwies ihnen (das Sprechen)  
und sagte: „Vater (wifo) hat  
gesagt, niemand soll sprechen,  
ich spreche nicht und werde nicht  
sprechen.“

Փեսացուները տեսնելով, որ  
երեք աղջիկն էլ թլուտա-  
կն, չեն նշանադրում և  
վեր կենում գնում են:

Als die Freier sahen, daß alle  
drei Töchter einen Sprachfehler  
hatten, wollten sie von der  
Verlobung nichts wissen und  
gingen weg.

Հորոսը սաստիկ բարկանում  
է աղջիկների վրայ ու  
նրանց տանից դուրս  
անում:

Hobos aber zürnte seinen Töchtern  
und jagte sie aus dem Hause.

Вешлище ohne Übersetzung.

(Wörter dazu am Ende.)

1. ԵՐԻՏԱՍԱՐԴԻՉ ԵՒ ԻԻՐ ԱՏՈՒԵՐԸ:

Մի տղայամիտ երիտասարդ կամեցաւ իւր ստուերը  
բռնել. բայց քանի որ նա ոտն առաջ էր դնում, շուքն  
էլ մի քայլ առաջ էր փախչում: Էլի ոտը փոխում էր,

1) Statt մուկը

2) Statt ծակը

3) Statt մտաւ

4) Statt տօսի

5) Statt կրխօսեմ

շուքն էլ նոյն բանն էր անում. յետոյ երիտասարդն սկսեց վազել, բայց զարմացած տեսաւ, որ ստուերն էլ վազում է առաջից: Երիտասարդը զօր տուեց<sup>1)</sup> ոտներին. շուքն էլ սկսեց աւելի ու աւելի շուռ փախչիլ. ճարր կտրուած<sup>2)</sup>, մեր թեթեամիտ երիտասարդը երեսը շուռ տուեց և սկսեց յետ փախչիլ: Մէկ էլ աչքի տակովը նայի ու ի՞նչ տեսնի՞ շուքը կընկակոխ վազում է իւր յետեից:

Աշխարհումս բազդ ասածդ էլ շուքի պէս բան է<sup>3)</sup>. շատերը նորա յետեից են ընկնում, ոչինչ ջանք չեն խնայում, բայց չեն կարողանում ձեռք գցել, ուրիշները, կարծես, փախչում են բազդից, բայց նա նորանցից պոկ չի գալիս, չի հեռանում:

## 2. ԱՐԴԱՐ ԴԱՏԱՏԱՆ:

„Ողորմութիւն արէք“, աղաղակեցին ողբալի ձայնով երկու պանդուխտ մուրացկաններ մի տաճիկ դատաւորի տան պատուհանի տակից:

Տանտէրն այդ միջոցին նստած էր մի փառաւոր բազմոցի վրայ և գիրք էր կարդում:

— Մեծ մարգարէ՞ն տայ, ասաց դատաւորը, կոթնեւոյ լուսամուտին: „Ողորմեցէ՛ք ի սէր<sup>4)</sup> մարգարէի“, նորից կրկնեցին օտարականները: — Կորէ՛ք այստեղից, անպի-

1) զօր տալ Anstrengung machen, sich anstrengen.

2) ճար Mittel, Hilfe; — անել Hilfe leisten; — չկայ es ist nichts zu machen; kein Ausgang aus der schlimmen Lage; — գտնել ein Mittel finden, ճարս ինչ է was soll ich machen? ճարը կտրուած er wußte nicht mehr, was er tun sollte.

3) Der Satz bedeutet: Das was du Glück auf unserer Welt meinst, ist wie der Schatten.

4) ի սէր um ... willen; սէր Liebe.

տաններ, աղաղակեց դատաւորը զայրանալով, և բարկութիւնից գիրքը վայր ձգեց յատակի վրայ:

„Ո՛ր, խղճացէ՛ք մեզ և ողորմութիւն արէ՛ք, թէկուզ ի սէր Աստուծոյ“, արտասուէրն աչքներին կրկնեցին օտարականները:

Այն ժամանակ դատաւորը վեր ցտաբեց բազմոցից և գոչեց զարհուրելի ձայնով: „Է՛յ, Մահմուդ<sup>1)</sup>, Ալլամէդ<sup>2)</sup>, կապեցէ՛ք այս թափառականներին և բանտը<sup>3)</sup> ձգեցէ՛ք“:

Բայց օտարականներն արդէն անյայտացել էին:

Անցկացաւ սրանից երեք օր. դատաւորը մեծ հրաւէրք ունէր. նա կռթնելով լուսամուտին, կանգնած մեծ Մուֆթիի<sup>3)</sup> հետ, դիտում էր Բաղդադի<sup>4)</sup> շրջակայքը, երբ պատուհանին մօտեցան նոյն օտարականները:

„Ի՞նչ մեծ ուրախութեան մէջ ես, մի՞ զատաւոր, ասացին օտարականները ցաւալի ձայնով. մի քիչ էլ մեզ մաս<sup>5)</sup> հանիր այդ ուրախութիւնից“:

„Մեծ Մուֆթի, ասաց դատաւորը, ահա արդէն երկրորդ անգամն է, որ գալիս են այս թափառականներն ինձ նեղացնելու: Ի՞նչ է շինում մեր խելօք Խալիֆան<sup>6)</sup>: Նա քնած է և չէ հրամայում, որ տանեն բանտարկեն այս դատարկաշրջիկներին: Բայց ես կը հրամայեմ շղթայակապ անել, որ էլ չկարողանան շրջել Բաղդադի փողոցներովը: Է՛յ, ձայն տուեց նա իւր ստրուկներին, եկէ՛ք, կապեցէ՛ք այս թափառականներին“:

Այդ ժամանակ օտարականները ներս մտան դահլիճ

1) Namen.

2) = բանդ Gefängnis.

3) Mufti.

4) Bagdad.

5) Auch մասն: Teil, Anteil.

6) Chalif.

և նորանցից մէկը դէն ձգելով վըայից պատառոտուած վերարկուն, ասաց սպառնալի ձայնով:

— Դատաւոր, այդպէ՞ս կարեկից և արդարադատ ես գու գէպի խեղճերը: Ես կարծում էի, թէ դու իմ ժողովրդի գթասիրտ և արդարասէր դատաւորն ես. բայց սաստիկ սխալուած եմ եղել: Չափար<sup>1)</sup>, վեր առ այս շնչին որդը և դատիւր մեր իմաստուն օրէնքով: Թող գիտենան ամենքը, որ թագաւորին չի կարելի խարել և որ՝ վաղ թէ ուշ, վատ գործերը կը յայտնուին ու կը պատժուին:

Բոլոր հիւրերը զարմանքից ու երկիւղից քարացան, տեսնելով, որ օտարականի հագուստով խօսող մարդը իրանց թագաւոր Հարունալ-Ռաշիդն է, իսկ նորա ընկերը՝ մեծ վեզիր Չափարը:

### 3. ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԻ ՏՈՒՆ:

Տանուտէր Խաչոյի<sup>2)</sup> բնակարանը այն տներից մէկն էր, որ թէ իրանց մեծութեամբ և թէ հարստութեամբ որոշուած էին միւսներից: Այս տնից ամեն առաւօտ քըլում էին գէպի նախիրը հարիւրի չափ անասուններ: Նրա կովերը, գոմէշները, եզները և ձիաներն ամենաբնտիրն էին ամբողջ գիւղն մէջ:

Այս տանն էին պատկանում հազարի չափ ոչխարներ, որոնք սեփական<sup>3)</sup> հովիւների հսկողութեան ներքոյ արածում էին մերձակայ լեռների վրայ: Այս տանն էր պատկանում այն ահագին ձիթահանր<sup>4)</sup> — ձէթ հանելու

1) Name.

2) Name.

3) Auch սեպհական eigen.

4) Auch ձիթահանր Dimäyfe.

գործարանը, — որ գտնուում էր գիւղի մէջ: Այս տանն էր պատկանում այն գեղեցիկ ջրաղացը, որ գտնուում էր գիւղից դուրս, որի անիւնները տարուայ բոլոր եղանակներում անդադար բանում էին:

Բայց այն, որ աւելի նշանաւոր էին Խաչոյի Հարստութեան մէջ, — գրանք էին նրա եօթը որդիքը, որոնք մինը միւսի յետեից հասած՝ ներկայացնում էին նրա տան Հարստութեան սիւները: Որդիքը բոլորը ամուսնացած էին և տունը լցուած էր ամեն հասակի երեխաներով: Ամուսնացած էին և նրա թոռներից մի քանիսը. նրանք նոյնպէս զաւակներ ունէին: Եւ ծերունի Խաչոն իր առաջ տեսնում էր մի քանի սերունդ, որ ապրում և գործում էին միասին: Առակի<sup>1)</sup> ձև էր ստացել այն խօսքը<sup>1)</sup>, թէ՛ „Խաչոն այնքան զաւակ ունի որքան և անասուն“:

Ծերունի Խաչոյի տունը հեռուից բոլորովին հին ու նախնական ամբողջի տպաւորութիւն էր գործում: Նա գտնուում էր մի բարձրաւանդակի վրայ և թէ իր շինուածքով, թէ՛ դիրքով ունէր այն բոլոր յարմարութիւնները, որոնք պէտք էին մի բնակութիւն ազատ պահելու համար արտաքին թշնամիներից: Այդ ամբողջ պատած էր չորս ահագին պատերով, որոնք քառակուսի ձևով միմեանց հետ միանալով՝ թողնում էին իրանց միջնավայրում մի բաւական ընդարձակ տարածութիւն, որի վրայ կառուցուած էին զանազան շինութիւններ: Դրսից ոչինչ չէր կարելի տեսնել, բացի չորս բարձր աշտարակից, որոնք միացնուն էին պարիսպների չորս անկիւնները: Ամբողջ շրջապատի մէջ զետեղուած էին բոլոր բնակութիւնները, բոլոր ծածկոցները, որ պէտք

<sup>1)</sup> Wörtl.: Eines Sprichwortes Form hatte bekommen jenes Wort = es war zum Sprichwort geworden ...



էին մի կանոնաւոր տնտեսութեան համար: Այստեղ էր ոչխարների գետնափոր գոմը, այստեղ էր ձիանների, կովերի և գոմէշների փարախը, որ անասունների տեսակի համեմատ առանձին-առանձին բաժանմունքներ ունէր: Այստեղ էր սրահը՝ երկրագործական անօթները պահելու համար, այստեղ էին մարագը, յարդանոցը, խոտանոցը, որոնց մէջ պահուում էր անասունները զարմանելու պաշարը, այստեղ կային զանազան մառաններ, զանազան ամբարներ մշակութեան բերքերի համար: Այստեղ կային և մի քանի խուղեր, որոնց մէջ բնակում էին ծերունի Սաչոյի հովիւներն ու ծառաները իրանց ընտանիքներով: Նրանք բոլորը ազգով քուրդ էին, կանայք ծառայում էին որպէս աղախիններ, իսկ տղամարդիկ որպէս նախրապաններ, հովիւներ կամ երկրագործական մշակներ: Մի խօսքով՝ այդ ամբողջի մէջ բովանդակուում էր մի փոքրիկ գիւղ, որի միակ տէրը և պետը ծերունի Սաչոն էր:

Նրա գերդաստանի համար որոշուած բնակարանները իրանց շինուածքով գեռ ևս<sup>1)</sup> պահպանել էին այն ժամանակուայ նախնական պարզութիւնն և ձևը, երբ մի ամբողջ ընտանիք ապրում էին մի վրանի տակ, այն զանազանութեամբ միայն, որ այժմ այդ վրանին փոխարինում էր քարեղէն շինուածքը: Նորա բազմաթիւ որդեկրանց<sup>2)</sup> համար, որոնց իւրաքանչիւրը իր զաւակներով մեծ ընտանիք կարող էր կազմել առանձին սենեակներ չկային, այլ բոլորը ապրում էին միևնոյն յարկի տակ, միևնոյն սենեակում, որ<sup>2)</sup> ոչ այլ ինչ էր բայց եթէ<sup>3)</sup> չորս

1) Auch zusammengeſchrieben գեռ ևս = noch.

2) Alter Gen. Plur. von որդիկ:

3) Das nichts anders war als ...

պատ, ծածկած ահագին գերաններով: Այստեղ վառում էին, այստեղ թխում էին, այստեղ կերակուր էին պատրաստում, այստեղ բոլորը միասին պառկում էին: Այստեղ կարելի էր տեսնել նորածին հորթեր, փոքրիկ ուլեր, որոնք երեխաների հետ խառնուած՝ վազվզում, ցատքոտում, աղաղակում էին և տունը լցնում կենդանի աղմուկով: Մի խօսքով դա Նոյի<sup>1)</sup> տապանն էր, որտեղ զետեղուած էին ամեն տեսակ կենդանիներ: Այս բնակարանին կից էր մի երկրորդը: Դա առաջուանից զանազանում էր նրանով միայն, որ առջևի ճակատը բոլորովին բաց էր և նայում էր բակին<sup>2)</sup>: Դրան ևս կոչում էին սրահ, թէև դա ծառայում էր որպէս ամառուայ<sup>3)</sup> բնակարան<sup>3)</sup>: Սրահի միջից մի դուռն էր բացւում դէպի գլխաւոր սենեակը, և այսպիսով նա ներկայացնում էր բուն բնակարանի նախադաւիթը: Նրա կողքին կար մի առանձին փոքրիկ սենեակ, որ կոչւում էր օդայ. նրա դռները միայն այն ժամանակն էին բացւում, երբ տունը հիւր էր գալիս: Սա միշտ պահւում էր մաքուր ու զարդարուած:

(Պս: Բաֆֆի:)

#### 4. ՆԱԻԱՍՍՐԴԻ ՏՕՆԵՐԸ .

Հին-Հայոց համար տարուայ ամենաառաջ Օգոստոս ամիսը բարեկենդան էր, կաղանդ էր: Այն ժամանակ, երբ բնութիւնը զարնանանման գեղեցկանում էր, մեր նախնիք կատարում էին նաւասարգի տօնը, որ նրանց տարեգլուխն էր և սկսում էր Օգոստոսի 11-ին:

Նաւասարգին մի քանի տօներ էին կատարում և դրանք ամենքն էլ մեր հեթանոսութեան ժամանակուայ

<sup>1)</sup> Noe.

<sup>2)</sup> Auf den Hof hinaus ging.

<sup>3)</sup> Sommerwohnung.

պահապան աստուածների տներն էին, քաջ նախնեաց յիշատակները, կորիճների մրցանքը և հասարակ ժողովրդի խաղերն ու վայելքներն էին:

Այդ հանդէսները կատարում էին քրմապետները. մեր քրիստոնէութեան ժամանակ նրանց փոխանակեցին խաչապակ քահանայապետները, որոնք մեհեանների տեղը եկեղեցիք շինեցին: Բնութիւնը իւր կերպարանքը չփոխեց, ազգն էլ իւր հանդէսները չփոխեց, այլ տները սրբեց և աստուածներին նուիրելու փոխանակ՝ ճշմարիտ Աստուածուն և նրա նահատակներին նուիրեց:

Նաևասարդի տօնից քանի մի օր առաջ կատարւում էր վարդածղի վարդանման „Աստղիկ“ դիցուհու տօնը, որի փոխանակ մեր առաջին հայրապետ Ս. 1) Գրիգոր Լուսաւորիչը 2) կարգեց „Վարդավառի“ 3) տօնը, Քրիստոսի պայծառակերպութեան տօնը, որ և մինչև այսօր տօնում ենք պայծառապէս. իսկ նաևասարդի առաջին օրը ազգային ամենից մեծ, պանծալի, սրբազան օրն է, և հանդէսները շատ օրեր էին տևում զանազան յիշատակներով, որոնք մի անունով „Սմանորայ“ կամ „Աշխարհաժողով“ էին ասում: Այս վերջին անունը ցոյց է տալիս, որ

1) Abkürzung von սուրբ = heilig (Sankt).

2) Der Erleuchter.

3) Aber dieses noch jetzt in Transkaukasien gefeiertes Fest sagt A. Katalshew (Sammelwerk zur Beschreibung kaukasischer Ortlichkeiten und Stämme. XVIII. 2 S. 1). „Über den Ursprung des Festes Վարդավառ (Blängen der Rose) steht in dem Buche Յայսմաւուր folgendes: In alten Zeiten hielten die heidnischen Armenier am 6. August ein Fest zu Ehren der Göttin Aphrodite [mit der man die Աստղիկ identifiziert] ab, von welcher man behauptete, daß sie aus Blut und Meereschaum geboren sei; man nannte sie „rosenfingrig“ (վարդամտն) und „goldhändig“ (ոսկի ձեռք) und opferte ihr Rosen. Dieses Fest nannte man Vardavap. Jetzt wird es deshalb gefeiert, weil Christus bis zu seiner Verklärung einer Rosenknospe gleich und während der Verklärung aus seinem Körper sich ein rosiges Leuchten ergoß.

2) Ein Landschaftsname; entspricht ungefähr der heutigen Erivaner gubernia.

այդ տօնի հանդիսականները միշտ մեծ բաղմութեամբ էին ժողովուում: Թագաւորը իւր Արարատեան շորս բիւր գնդով, նախարարները ութ բիւր գումարտակներով, վեց հարիւր գաւառատեարք<sup>1)</sup> և շորս հարիւր գահակալ իշխաններ, բաղմութիւ քումեր իրանց պաշտօնեաներով եւ ուրիշ հազարաւոր հանդիսականներ զարդարում էին այս տօնը:

Հայոց այս „Համաշխարհական“ տօնի պատճառը երեք բան էր. առաջին՝ հին տարեմուտն էր, որովհետեւ „նաւասարդ“ նշանակում „նոր տարի“, երկրորդ՝ նաւասարդը ջրհեղեղի յիշատակն էր, ուստի և այդ օրերը զանազան ջրախաղեր էին կատարւում տապանով Արարատ սարի վրայ մարդկանց փրկութեան տօնը յիշատակելու համար. իսկ մենք հիմայ ջրի այս հանդէսը Վարդավառի օրն ենք կատարում, երրորդ՝ „Ամանորայ ամենաբեր“ դից տօնն էր, որ բերքի և առատութեան Աստուածն էր համարւում:

(Ալիշան:)

##### 5. ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԱՐԻ ՀԱՅ ԿԱՆԱՅԻԸ.

Ես չեմ կարող համարել Հայոց աշխարհի բոլոր երանելի առաքեալների, կապուածի և պատերազմի մէջ սպանուածների կանանց, որովհետեւ ինձ անձանօթներն աւելի շատ են, քան թէ ծանօթները: Հինգ հարիւրի չափ անձամբ ճանաչում եմ ոչ միայն մեծամեծներից, այլ և փոքրերից շատերին: Նորա ամենքը միասին երկնաւոր նախանձով վառուած, ոչնչով պակաս չմնացին նոցանից, որոնք աշխարհ չէին մտել: Որովհետեւ մեծերն ու փոքրերը մի հաւատի առաքինութեամբ զինու-

<sup>1)</sup> Mter Blur. von գաւառատէր:

որեցան, նոքա ամենեւին չյիշեցին մայրենի ազատութեան փափկութիւնը, այլ ինչպէս գիւղացի մարդիկ, որոնք սովոր են փոքր հասակից շարշարանքներ և տանջանքներ կրելով անցկացնել իրանց կեանքը, նոյնպէս և նոքա յանձն առան նոցանից աւելի ևս համբերութեամբ դիմանալ ցաւերին:

Նոքա ոչ միայն իրանց հոգու մէջ մխիթարուում էին յաւետեանական աներևոյթ յուսով, այլ մարմնի նեղութիւններովն աւելի եւս դէն ձգեցին ծառայութեան բեռը: Թէպէտ նոցանից իւրաքանչիւրն ունէր ձեռնասուն սպասաւորներ, բայց բոլորովին չէր կարելի նշմարել, թէ ո՞րն է տիկինը և ո՞րը ազախներ, բոլորի շորերը միևնոյն էին. երկուսն էլ միասին պառկում էին շոր խոտի վրայ: Ոչ ոք միւսի համար անկողին չէր պատրաստում, որովհետև նոքա չէին ճանաչում խոտերը միմեանցից զանազանել, պատճառ, որ բոլոր խոտերը միապէս թխագոյն էին իսկ գլխատակի բարձերը սև: Չկային նոցա համար առանձին խոհարարներ՝ անուշ կերակուր պատրաստելու և ոչ որոշած հացթուխներ՝ ազատների սովորութիւնների համեմատ, այլ ամենի ուտելիքը մին էր: Շաբաթամուտան անց էին կացնում այն միայնակեաց մարդկանց պէս, որոնք բնակուում են անապատում: Ոչ ոք միւսի ձեռին ջուր չէր անում և փոքրերը մեծերին երեսրբիչ չէին մատուցանում: Սապոն չգիպաւ փափկասուն կանանց ձեռքերին և հոտաւէտ իւղ չգործ<sup>1)</sup> դրուեցաւ<sup>1)</sup> նոցա զուարճութեան համար: Նոցա առջևը չգրուեցան մաքուր ամաններ և գործ չդրուեցան ուրախութեան համար բաժակակալներ, ոչ ոք չկանգնեց նոցա դռանը հիւրեր ընդունելու և

<sup>1)</sup> = գործ չգրուեցաւ:

Նոցա հոյակապ տների դռները չբացուեցան պատուական հիւրերի առաջ: Ոչ ոք նոցանից չյիշեց, [ժէ ունեցել է մի ժամանակ փափկասուննոց դայեակներ կամ սիրելի հարազատներ:

